ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ Ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 45 90 47

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000:

ISSN 1829-3468

ՀԻՆԳՇԱԲԹԻ
19 ՓԵՏՐՎԱՐԻ 2015Թ. № 5 (348)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Այս մուրացիկը,
որ - թեեւ թիկնեղ -
Սակայն ե՛ւ մերկ է,
տե՛ս , ե՛ւ ընչազուրկ...
ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

Հրաչ Ջաբրայան, «Դանդի Փրիշա Մեթալս Կապան» ՓԲԸ տնօրեն

Եղծ աղանդոց եւ շառլատանության

Թուրքական կառավարությունն իրականացումի մեջ է: Ս.թ. փետրվարի 4-ին Հայաստանի քաղաքներից մեկում՝ Կապանում, մի քաջ ու անվախ հայորդի՝ Հրաչ Ջաբրայան անուն-ազգանունով, դարակազմիկ հայտարարություն է հնչեցրել Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Առյուծի կաթ խմած այդ պարոնի (վարսավիրանոցից հենց նոր դուրս եկածի արտաքինով) հայտարարությունը, որ Աբդուլ Համիդի օրերից մինչեւ Ադանայի ջարդեր ու մինչեւ 1915 թվական, մինչեւ այսօր նախադեպ չունի, իսկապես ցնցող է: Ֆեյսբուքյան իր էջում նա ուղղակի պահանջում է Թուրքիայի կառավարությունից՝ անհապաղ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, փոխհատուցել հայ ժողովրդին՝ բոլոր տառապանքների ու վնասների համար, վերադարձնել մեզ պատկանող Արեւմտյան Հայաստանի տարածքները՝ Օսմանյան Թուրքիայի կողմից 16-րդ դարից մինչեւ 20-րդ դարասկիզբ նվաճված:

Մի ուրիշ՝ հույժ կարեւոր ու պատմական նորություն էլ իմացանք այդ անվախ հայի փետրվարի 4-ի հայտարարությունից. պարզվում է՝ Կապանի կոմբինատի 1200 կապանցի աշխատող (բնականաբար՝ հայեր) իրենց աջակցությունն են հայտնում հայ ժողովրդին ու Հայաստանին, նաեւ Արցախին:

Կարդում ենք այդ հայտարարությունը եւ հիացմունք ու հպարտություն ապրում՝ որքա՜ն ջանք է գործադրել այդ պարոնը, որ կապանցիները, ի վերջո, իրենց աջակցությունը հայտնեն հայ ժողովրդին, Հայաստանին ու Արցախին: Դա իսկապես սխրանք է. չլիներ Հրաչը, Կապանը Հայաստանի ու հայ ժողովրդի հետ չէր լինի, ոչ էլ կաջակցեր Արցախին…

Բայց, չէ՛, սիրելի՛ ընթերցող, ո՛չ կատակելու ու հեգնելու ժամանակ է, ո՛չ էլ՝ չարախնդալու: Իրավիճակն ավելի լուրջ է եւ սթափ ու ողջամիտ վերլուծություն է պահանջում:

Եվ առաջին հարցերը, որ ծագում են բանական մարդու մոտ Հրաչի վերջին օրերի զավզակություններն ընթերցելիս, հետեւյալն է՝ մի՞թե այդ տղան լրիվ կորցրել է աբուռը, մի՞թե այդ տղան թքած ունի մեր պատմության, այստեղ ապրողներիս ու Հայաստանի Հանրապետու-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

Անգեղակոթ. խնդրահարույց է մնում ոռոգման ջուրը

Մարզի գյուղերը

Սիսիանի տարածաշրջանի Անգեղակոթ այցելողը որոշակի տեղեկատվություն կարող է ստանալ նորաշեն գյուղապետարանի մերձակա պանթեոնից, որտեղ վեր է խոյանում զորավար Անդրանիկի հուշարձանը: Այստեղ հավերժական քնով ննջում են մերօրյա ազատամարտի նահատակները: Նրանց շիրմաքարերը զորավարի բազալտակուռ հուշարձանի հետեւում են: Եվ այնպես է թվում, թե հրամանատարը մարտի է գնում՝ հետեւից տանելով իր զինվորներին: Պատմական գյուղ է Անգեղակոթը, հարուստ պատմական հուշարձաններով. գյուղում երեք եկեղեցի կա՝ Սուրբ Մարիամ Աստվածածին, Սուրբ Ստեփանոս, Սուրբ Վարդան: Վերջինս ավելի շուտ սրբավայր է, վերջին տարիներին վերականգնվել են դրա մոտ կատարվող ուխտագնացությունն ու տոնախմբության անցկացումը: Սուրբ Ստեփանոս եկեղեցում 1699 թվականին Իսրայել Օրին Սյունիքի 11 մելիքի մասնակցությամբ ժողովում քննարկել է Արեւելյան Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու հարցը:

Ոչ պակաս ուշագրավ է փաստը, որ 1918 թվականին Անդրանիկն իր զորականների խմբով վեց ամիս իջեւանել է Անգեղակոթում: Այսօր էլ տեղաբնակները պատմում են, որ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 3

Արմեն Խաչատրյան, Անգեղակոթի գյուղապետ

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Գյուղնախարարը՝ Սյունիքի մարզում

Պաշտոնական

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը փետրվարի 11-ին այցելեց Սյունիքի մարզ:

Մարզում նախարարի առաջին կանգառը Խնձորեսկ համայնքում էր, որտեղ նա Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի հետ միասին մասնակցել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից եւ Համաշխարհային բանկի աջակցությամբ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» ծրագրի (2011-2016թթ.) շրջանակներում հիմնված անասնաբուժական եւ գյուղատնտեսական սպասարկման կենտրոնի պաշտոնական բացման արարողությանը:

«Սա արդեն երկրորդ անասնաբուժական կենտրոնն է, որը շահագործման է հանձնվում այս ծրագրի շրջանակում, եւ մենք առաջիկայում նախատեսում ենք հանրապետության բոլոր մարզերում նմանատիպ կենտրոններ հիմնել: Կենտրոնը մարզի անասնապահության զարգացմանն ուղղված կարեւոր օժանդակություն է տեղի ֆերմերներին եւ առաջարկում է բարձրորակ խորհրդատվական ծառայություններ, ինչն անկասկած մեծապես կնպաստի գյուղացիական տնտեսությունների գործունեությունն առավել արդյունավետ եւ նպատակային կազմակերպելուն», – բացման խոսքում մասնավորապես նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարարը:

Նախարարը հավելել է, որ այս կենտրոնների տեխնիկական եւ մասնագիտական կարողությունները թույլ են տալիս դրանք վերածել տարածաշրջանում մասնագիտական զարգացմանն ու բիզնեսի աջակցմանն ուղղված բազմաթիվ ծրագրեր իրականացնող կենտրոնների, ինչպես նաեւ ընդգրկում են մատուցվող ծառայությունների լայն շրջանակ, այդ թվում՝ անասնաբուժական ծառայություններ, հիվանդությունների կանխարգելում եւ բուժում, արհեստական սերմնավորման ծառայություններ, անասնաբուժական դեղորայքի, անասնաբուժական եւ անասնապահական սարքավորումների եւ պարագաների վաճառք, խորհրդատվություն եւ ուսուցողական դասընթացներ:

Նախարարը շրջել է նորաբաց կենտրոնում, ծանոթացել տեխնիկական հնարավորություններին եւ մատուցվող ծառայություններին:

Այնուհետեւ ՀՀ գյուղատնտեսության նախարարը եւ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն ուղեւորվել են Գորիսի քաղաքապետարան, որտեղ մասնակցել են գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպչական հարցերի քննարկման նպատակով հրավիրված մարզային խորհրդակցությանը: Խորհրդակցությանը մասնակցում էին նաեւ ՀՀ ԳՆ գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակի տնօրեն Գագիկ Խաչատրյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարտուն Մաթեւոսյանը, համայնքապետեր եւ ոլորտի այլ պատասխանատուներ:

Անդրադառնալով նախորդ տարվա ընթացքում մարզում գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքներին՝ նախարար Սերգո Կարապետյանը նշել է, որ մարզում առկա է անասնաբուծության զարգացման ընդարձակ ներուժ եւ անհրաժեշտ է միայն համապատասխան քայլեր ձեռնարկել ինչպես տավարի, այնպես էլ ոչխարների եւ այծերի գլխաքանակի ու մթերատվության ավելացման ուղղությամբ:

Կարեւորելով մարզում անասնապահության ճյուղի զարգացումը՝ նախարարն ընդգծել է «Համայնքների գյուղատնտեսա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 8

Դպրոցը՝ բանակի կողքին

Փետրվարի 7-ն է: Սիսիանի ավագ դպրոցի պատվավոր հյուրերն են գեներալ-մայոր Բասենցի Ազոյանի, գնդապետ Հովիկ Ազոյանի, շարքայիններ Աղվան Մինասյանի եւ Գրիգոր Գրիգորյանի հարազատները: Հպարտությամբ ու հուզումով են փակցնում հայրենիքին ու նրա բանակի կայացմանն իրենց կյանքն ու կենսագրությունը նվիրած անհատների պատկերով կրծքանշանները ու մեկ անգամ եւս համոզվում. նրանք մեզ հետ են, նրանք ասելիք ունեն, նրանց օրինակով դեռ սերունդներ պետք է դաստիարակվեն:

Բարձրաստիճան զինվորականներին ու պատվավոր հյուրերին կրթօջախի աշակերտները դիմավորում են դպրոցի բակում՝ եռագույն դրոշներով: Տոնական օրվան ողջ դպրոցն է պատրաստվել: Այստեղ միշտ են լուրջ տեղ հատկացրել ռազմահայրենասիրական դաստիարակությանը: Այսուհետ աշակերտներն աչքի առաջ նաեւ կոնկրետ ու վառ օրինակներ կունենան:

Առաջինը կտրվում է խնամքով ձեւավորված «Փառքի սրահի» ժապավենը: «Եվ արդ հավերժի մեծ գիրկն եք գնում» խորագրի ներքո Բասենցի Ազոյանի, Աղվան Մինասյանի, Հովիկ Ազոյանի եւ Գրիգոր Գրիգորյանի նկարներն են, կենսագրությունները:

Գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը կարեւորում է. **«Այստեղ աշակերտները հնարավորություն կունենան ծանոթանալու նաեւ ՀՀ ազգային, Արցախի հերոսներին, ինչպես նաեւ Հայրենական մեծ պատերազմում իրենց արիությամբ առանձնացած սիսիանցի 4 հերոսներին՝ Գեորգի Առուստամյանին, Լիպարիտ Իսրայելյանին, Անդրանիկ Մանուկյանին, Սամսոն Մկրտումյանին, Լեռնահայաստանի պաշտպաններ Գարեգին Նժդեհին ու Պողոս Տեր-Դավթյանին: Դե իսկ Սիսական գնդի անցած հերոսական ուղու մասին կհիշեցնեն սիսիանցի հերոս տղաների խմբակային լուսանկարն ու Վազգեն Սարգսյանի հանրահայտ խոսքերը. «««Սիսական» մոտոհրաձգային գունդը շտապ օգնություն է: Որտեղ ամենաթեժ մարտն է, գունդն այնտեղ է...»:**

Հրանտ Մինասյանը հուզմունքով է կարդում որդուն՝ վաղամեռիկ բանաստեղծ-ազատամարտիկ Աղվան Մինասյանին հասցեագրված խոսքերը. **«Ապրեց որպես բանաստեղծ՝ հախուռն ու ինքնազոհ կյանքով եւ նահատակվեց հերոսաբար...»:** Շնորհակալ է՝ դպրոցի գրադարանն այսուհետ որդու անունով է կոչվելու:

Ավագ դպրոցի աշակերտներն այսուհետ ռազմարվեստի պատմությանը կծանոթանան Բասենցի Ազոյանի անվան դասարանում: Ժապավենը կտրում է գեներալ-մայորի դուստրը՝ Լիանա Ազոյանը. **«Ես երբեք չեմ կորցնում այն զգացողությունը, որ հայրս իմ կողքին է: Այսօր ինձ համար կրկնակի ուրախություն է, քանի որ հաղորդակցվում եմ այն պատմությանը, որի կերտմանը նաեւ իմ հայրն է մասնակցել: Ընդհանրապես մեր գերդաստանից շատերն են տարբեր ժամանակներում իրենց կարողություններն ու հնարավորությունները ներդրել երկրի կայացման ու զարգացման գործում: Հպարտ եմ, որ այսօր այստեղ եմ»:**

«Պարոն գեներալ-լեյտենանտ, 12-րդ իրավագիտական դասակը պատրաստ է ներկայացնելու գեներալ-մայոր Բասենցի Ազոյանի

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

ՑԱՆԿ
2014 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ 1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ)

Հ/Հ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Ընդամենը (հազ. դրամ)	Որից ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտային հարկ)
4	ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ՔԱՋԱՐԱՆ	19,940,784.4	6,597,097.2
16	ԴԱՆԴԻ ՓՐԻՇԱ ՄԵԹԱԼԱ ԿԱՊԱՆ ՓԲԸ	ԿԱՊԱՆ	5,215,111.0	2,961,000.0
40	ԱԳԱՐԱԿԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ	ԱԳԱՐԱԿ	3,193,975.4	1,356,157.4
43	ՈՐՈՏԱՆԻ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ	ԳՈՐԻՍ	2,880,064.7	1,527,042.5
83	ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ	ԱԳԱՐԱԿ	1,574,974.9	98,941.1
139	ԱՐՊԱՆԻՎ	ԳՈՐԻՍ	897,859.4	66,144.4
228	ԶԱՆԳԵԶՈՒՐ ՄԱՅՆԻՆԳ	ՔԱՋԱՐԱՆ	512,769.7	237,132.7
408	ՎԱՅԲԼ	ԿԱՊԱՆ	284,204.7	108,356.9
424	ԼԵՌ-ԷՔՍ	ԿԱՊԱՆ	271,203.9	163,402.3
434	ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ	ՄԵՂՐԻ	264,666.0	64,887.0
534	ՍԻՍԻԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ	ՍԻՍԻԱՆ	208,256.3	89,198.8
537	ԿԱՊԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ. ՇԱՀԱԳՈՐԾ. ԵՎ ՇԻՆԱՐԱՐ	ԿԱՊԱՆ	205,721.8	66,799.8
685	ԿԱՊԱՆԻ ԲԵՌՆԱՈՒՂԵՎՈՐԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ	ԿԱՊԱՆ	156,256.1	69,358.9
704	ԴԱՆԵՍԻԱ	ԿԱՊԱՆ	152,121.5	84,358.0
741	ՎԻԼԼԱ ՕՅԼ ՍՊԸ	ԱԳԱՐԱԿ	143,021.6	13,371.0
751	ԷԼՅԱՍԻԿ	ՍԻՍԻԱՆ	141,149.3	12,011.8
783	ՈՍՄԱՐ	ԳՈՐԻՍ	135,903.5	32,003.9
784	ԿԱՊԱՆԻ ,,ՆՈՐՈԳՇԻՆ,,	ԿԱՊԱՆ	135,746.2	47,834.8
804	ՌՈՅԱԼ ՓՐԻՆԹ	Գ.ՀԱՐԺԻՍ	130,959.5	25,020.0
830	ԿԱՊԱՆ-ԷՆԵՂԺԻ	ԿԱՊԱՆ	127,246.3	109,245.8
835	ՔԱՋԱՐԱՆ ՄՈՆՏԱԺ	ՔԱՋԱՐԱՆ	126,933.3	37,815.2
840	ԳՈՐԻՍԻ ԷՑՇ	ԳՈՐԻՍ	126,004.5	47,670.2
843	ԿԱՊԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԿԱՊԱՆ	125,700.4	118,972.5
885	ՄԵԽ-ՆՈՐՈԳՈՒՄ	ՔԱՋԱՐԱՆ	119,363.0	64,576.2
920	ՈՍՏԱՆԻԿ ՀԱՅՐԵՆՅԱՑ	ԱՆԳԵՂԱԿՈԹ	113,869.6	3,803.0
979	ԳՈՐԻՍԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ	ԳՈՐԻՍ	106,633.4	104,861.0
982	ՇԱՀՐ	ԿԱՊԱՆ	106,397.0	72,000.0

Ամփոփվեցին «Ռուսական արջուկ» եւ «Մեղու» մրցույթների արդյունքները

Հանրակրթություն

2009 թվականից «Այբ» հիմնադրամը Հայաստանում եւ 2010 թվականից Արցախում կազմակերպում եւ անց է կացնում «Կենգուրու» եւ «Ռուսական արջուկ» դպրոցական միջազգային մրցույթները: Հաշվի առնելով այս փորձը, ելնելով փաստից, որ շատ երկրներում կազմակերպում եւ անց են կացնում նմանատիպ մրցույթներ տարբեր լեզուներից՝ հիմնադրամը 2014թ. ձեռնամուխ եղավ ստեղծել եւ ամեն տարի անցկացնել եւս մեկ նմանատիպ «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթը, որ կնպաստի երեխաների լեզվամտածողության եւ լեզվագիտական ունակությունների զարգացմանը: Հայերենի մրցույթի ստեղծման մտահղացումը «Այբ» կրթական հիմնադրամում առաջացավ իր որդեգրած արժեքների եւ նպատակների շարունակությունն ապահովելու համար, այն է՝ Հայաստանում ձեւավորել կրթության նոր մշակույթ եւ համակարգված ներդրումներով աջակցել երկրում կրթության ոլորտի զարգացմանը:

2014թ. հոկտեմբերի 28-ին ԿԳ նախարարությունը եւ «Այբ» կրթական հիմնադրամը ստորագրեցին համագործակցության հուշագիր, որի համաձայն կողմերը պարտավորվեցին համագործակցել Հայաստանում «Այբ» հիմնադրամի կողմից կազմակերպվող «Կենգուրու», «Ռուսական արջուկ», «Մեղու» մրցույթների եւ «Պատանի քիմիկոսների համահայկական մրցաշարի» անցկացման գործում:

2014թ. նոյեմբերի 13-ին Հայաստանում արդեն հինգերորդ տարին պաշտոնապես անցկացվեց «Ռուսական արջուկ. լեզվաբանություն բոլորի համար» միջազգային մրցույթը, որին մասնակցեց Հայաստանի բոլոր մարզերի եւ Արցախի 302 դպրոցի 2-12-րդ դասարանների 8010 աշակերտ՝ ունենալով 409 մրցանակակիր՝ 146 լավագույն արդյունքով: Հիմնադրամի մասնագետների հավաստմամբ՝ արդյունքների տոկոսային հարաբերությունը ցույց է տալիս, որ այս տարվա արդյունքը կարելի է լավ որակել:

2014թ. հոկտեմբերի 30-ին Հայաստանում եւ Արցախում առաջին անգամ անցկացվեց «Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթը, որին մասնակցեց Հայաստանի եւ Արցախի 961 դպրոցի 3-12-րդ դասարանների 44411 աշակերտ, որից 1392 մրցանակակիր՝ 712 լավագույն արդյունքով:

2015թ. փետրվարի 11-18-ն ընկած ժամանակահատվածում հանրապետության 31 քաղաքում եւ Ստեփանակերտում ամփոփվեցին 2014թ. անցկացված այս երկու մրցույթի արդյունքները:

Ինչպես հավաստիացրեց «Այբ» հիմնադրամի դպրոցական միջազգային մրցույթների ծրագրի ղեկավար Շուշան Կարապետյանը, միջազգային այս մրցույթների նպատակն ավելի շատ երեխաների տրամաբանությունն ու լեզվամտածողությունը զարգացնելն է, եւ հիմ-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

ԼՈՒՍԱՆԿԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Անգեղակոթ. խնդրահարույց է մնում ոռոգման ջուրը

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

զորավարի ահից թուրք ելուզակները ռիսկ չեն արել հարձակվել ոչ միայն Անգեղակոթի, այլ նաեւ շրջակա գյուղերի վրա: Աթանեսյանների օջախում է իջեւանել զորավարը: Այժմ էլ նախաստեղծ տեսքով պահպանվում է սենյակը, որտեղ բնակվել է նա, նույնն են մնացել դուռն ու բռնակը, որին օրական մի քանի անգամ դիպել են հայրենիքի նվիրյալի մատները: Ուշագրավ է, որ այդ տանն այժմ ապրում է Անգեղակոթի՝ Մեծ հայրենականի միակ կենդանի վետերանը՝ Արամ Աթանեսյանը, ով, լարելով հիշողությունը, դրվագներ է պատմում Անդրանիկի՝ Անգեղակոթում եղած ժամանակներից: Ի հիշատակ Անդրանիկի՝ Անգեղակոթում լինելուն՝ համագյուղացի քարագործ վարպետ Գրիգոր Ավետիսյանի նախաձեռնությամբ ու մասնակցությամբ էլ կանգնեցվել է զորահրամանատարի հուշարձանը:

Իսկ ընդհանրապես Անգեղակոթի սկզբնավորումը կապում են 5-րդ դարի հետ, երբ գտնվում էր Սյունիքի քաղաքական ու կրոնական կենտրոն Շաղատի մերձակայքում: Նախ այստեղ է հիմնավորվել Վասակ Սյունին: Անգեղակոթում է գտնվում, ըստ պատմաբան Մորուս Հասրաթյանի, Վարդան զորավարի սրբավայրը: Այստեղ է ամփոփված հայոց մեծ զորավար Վարդան Մամիկոնյանը, ում դին գյուղ են բերել Ավարայրից վերադարձող զորքերը 451 թվականին:

Անգեղակոթը միջին դարերում Սյունիքի հոգեւոր եւ մշակութային, ապա նաեւ վարչական կենտրոններից էր: 16-17-րդ դարերում մելիքանիստ էր, նույնիսկ անվանվում էր գյուղաքաղաք: Այստեղ ընդօրինակվել են ավետարաններ, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, բազմաթիվ ձեռագրեր: Ավելի վաղ Սյունիքում մեծ համբավ ուներ Տաթեւի վանահայր Շմավոն վարդապետ Անգեղակոթցին, ով հսկայական ծառայություն է մատուցել սյունյաց եկեղեցուն եւ ժողովրդին, մեծ աշխատանքներ իրականացրել այս ու այն կողմ ցրված սուրբ մատյանների հավաքման գործում:

1810-20 թվականներին բնակավայրը զրկվել է հայ բնակչությունից: Կրկին մարդաշատ է դարձել Անգեղակոթը 1828 թվականին, երբ այնտեղ հաստատվել են Պարսկաստանի տիրապետության ներքո գտնվող հայկական գավառներից (հիմնականում Խոյ եւ Սալմաստ) գաղթած հայ բնակիչները, որոնք հիմնեցին նոր Անգեղակոթը:

Անգեղակոթի գյուղապետարանն այժմ հարմարավետ շենքում է տեղակայված: Ցուցանակից տեղեկանում ենք, որ համայնքի կենտրոնի շենքի հիմնանորոգման ծրագիրն իրականացրել է 2012-ին Հայաստանի սոցներդրումների հիմնադրամը, համայնքի անունից ներդրումը կատարել է պոլսահայ օգնության միությունը՝ Էրրոլ Կարաքաշի եւ Գրեգորի Մարուքյանի աջակցությամբ: Անգեղակոթ համայնքը 2008-ի նոյեմբերից ղեկավարում է Արմեն Խաչատրյանը: Երբ սկսել էր պաշտոնավարել, գյուղը հինգ տոկոսով էր գազիֆիկացված, յոթ մլն դրամ էր անհրաժեշտ այդ կարեւոր գործն ավարտին հասցնելու համար: Բացի այդ, համայնքի ղեկավարումը ստանձնելու պահին գյուղապետարանը 11 մլն դրամ պարտք ուներ (աշխատավարձի եւ սոցիալական վճարումների): Ինչեւէ, գյուղապետի եւ համայնքի ուժերով կապույտ վառելիքը դարձավ անգեղակոթցիների սեփականությունը:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Որոշ տներ (մոտ 15) բավականին հեռու էին գազատարից, դրանց գազիֆիկացման համար անհրաժեշտ խողովակը տրամադրեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Համայնքի գազիֆիկացումը գյուղապետը համարում է ամենակարեւոր հիմնախնդիրը, որ լուծվեց իր պաշտոնավարման ընթացքում:

Երկրորդը՝ խմելու ջրի խնդիրն է, որ ամառային տարեշրջանում չէր բավականացնում: Մուխուրության ջրատարից դեպի գյուղ մինչեւ 2000 թվականը ջրատար էր անցկացվել, բայց անգործության էր մատնվել: Հնարավոր եղավ ջրագիծը վերանորոգել, գյուղապետի հավաստմամբ՝ խմելու ջրի խնդիրը կարելի է համարել լուծված, բայց ոչ ամբողջությամբ, քանի որ տնամերձ հողամասերը ոռոգում են խմելու ջրով, եւ ամառանը ջրի պակաս զգացվում է:

Հարցերի հարցը ոռոգման ջուրն է, որ համայնքը ստանում է Սպանդարյան ջրանցքով, դրա Անգեղակոթի հատվածը կառուցվել է դեռեւս 1940 թվականին եւ մասնակի նորոգվել 1990-ականների կեսերին: Տեղեկացանք, որ 18 կմ երկարություն ունեցող ջրանցքի մեկ երրորդն է բարվոք վիճակում, ինչի հետեւանքով գլխամասից վերցվող վայրկյանում 1200 լիտր ջրից գյուղ է հասնում 30-40 լիտրը: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են: **«Եթե ջրանցքը չնորոգվի, եւ Անգեղակոթն անհրաժեշտ քանակությամբ ոռոգման ջուր չստանա, դա ցավագին կանդրադառնա գյուղի տնտեսության վրա, ջրանցքն է անգեղակոթցուն կապում իր հողին ու ջրին»,** – ահազանգ է հնչեցնում համայնքի ղեկավարը: Խնդրո առարկայի առնչությամբ նա գրություններ է ուղարկել բարձր ատյաններ, մասնավորապես, ՀՀ ջրային պետական կոմիտե, բայց այդ ամենը մնացել է որպես ձայն բարբառո հանապատի: Հիմնախնդրին թերթն անդրադարձել էր 2006-ին («Սյունյաց երկիր», 15 նոյեմբերի 2006թ.), բայց նույն ջուրն է, նույն ջրաղացը:

Անգեղակոթի համայնքային բյուջեն մոտ 35 մլն դրամ է, որից 25 մլն պետության հատկացրած լրավճարն է, մոտ յոթ մլն դրամը հողի հարկն է: Բյուջեի մի մասը գոյանում է տեղական տուրքերից (գյուղում գործում է վեց խանութ), նաեւ գույքահարկից: Հնարավո՞ր է նման բյուջեով գյուղում որեւէ նշանակալից գործ կատարել: Գյուղապետի փոխանցմամբ՝ բյուջեի մոտ ինը մլն դրամը հատկացնում են պահպանելու գյուղի մանկապարտեզը, որտեղ երկու խումբ է գործում՝ մոտ 50 երեխայով: Մանուկների սնունդը գյուղապետարանն է հոգում:

«Ամենադժվարը հողի հարկի հավաքումն է, գյուղացիների մի մասը տեղում չէ, տարիներով հողի հարկի պարտքեր են կուտակված», – տեղեկացնում է համայնքապետը: Անգեղակոթը եզակի գյուղերից է, որտեղ քարի մշակման երեք արտադրամաս է գործում, բայց դրանք գյուղի բյուջեին միայն հողի հարկ են վճարում: Այդ քարհանքերն արտոնագիր ունեն գործելու, ուստի բոլոր հաստատագրված հարկերը վճարում են պետությանը: Դրականն այն է, որ գյուղից հինգ-վեց ընտանիք աշխատում է քարամշակման արտադրությունում:

Ինչպես բոլոր գյուղական համայնքներում, Անգեղակոթում եւս բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն ու հողագործությունն է: Գյուղաբնակն իր եկամուտների մեծ մասը ստանում է գյուղատնտեսության այդ ճյուղերից: Գյուղացիների տնամերձերում ընդհանուր առմամբ մոտ 10 հա կարտոֆիլ է ցանվում: Իսկ ընդհանրապես համայնքում աճեցվում է 50 հա կարտոֆիլ, եթե ամռան տարեշրջանում ոռոգման ջուրը բավականացնում է: Հարցերի հարցը անասնապահական մթերքների, մասնավորապես մսի իրացումն է: Համայնքում մոտ 100 ցլիկ են բտել վաճառելու նպատակով: Բայց դա առայժմ չի հաջողվում: Նույնը մանր (մոտ 1000), ինչպես նաեւ խոշոր (100-150) եղջերավոր անասունների դեպքում: Իսկ իրացումը պարզապես անհրաժեշտ է, որպեսզի ստացված գումարով հոգան վարուցանքի հոգսերը. դիզվառելիք, պարատանյութ եւ սերմացու ձեռք բերեն: Միջնորդը գյուղացուց միսը գնում է 1800-2000 դրամով, որը չի փակում անասնապահի՝ մսի արտադրության վրա ծախսած գումարները ու չի արդարացնում ներդրած ջանքերը:

Համայնքապետն այն համոզմունքն ունի, որ գյուղում գոյատեւելու համար բավարար չէ միայն գյուղատնտեսությամբ զբաղվելը, որ համայնքում նաեւ արտադրություններ պիտի գործեն՝ վկայակոչելով փաստը, որ խորհրդային տարիներին Անգեղակոթում գործում էին Սիսիանի տրիկոտաժի ֆաբրիկայի մասնաճյուղը՝ 60 աշխատատեղով, այլ արտադրություններ: **«Պետք չէ խոշոր արտադրություն հիմնել, անհրաժեշտ չէ մեծ ներդրումներ անել, փոքր արտադրամասերով հնարավոր է գյուղում զբաղվածության խնդիր լուծել, շահագրգռել, որ գյուղացին չլքի իր տունը: Համոզված եմ՝ գյուղում 100 հազար դրամ վաստակելու դեպքում երիտասարդն Անգեղակոթը չի թողնի՝ գնա Ռուսաստան: Միայն աշխատանք լինի, մարդ կապվի իր հող ու ջրին,** – մտահոգություն է հայտնում զրուցակիցս, – **անգեղակոթցին շատ դժվար է լքում իր հողն ու ջուրը, բայց որ լքում է, էլ հետ չի գալիս: Եվ ամենացավալին այն է, որ այսօր գյուղից հեռանում են երիտասարդներն ու երիտասարդ ընտանիքները: Դժվար է խոստովանել, բայց այսօր արդեն Անգեղակոթը ծերացող համայնք կարելի է համարել: 1980-ական թվականներին գյուղի դպրոցում մոտ 500 աշակերտ էր սովորում, այժմ՝ 225, սրանով, կարծում եմ ամեն ինչ ասված է»:**

Իմանում ենք, որ Անգեղակոթում բնակելի շենք վերջին անգամ կառուցվել է 1990 թվականին: **«Մի տան մեջ երեք եղբայր են մեծանում, ամուսնանալու տարիքի հասնելուց հետո երկուսը ստիպված թողնել-հեռանալու են հայրական օջախից: Անցել են այն ժամանակները, երբ մարդիկ գերդաստանով մի ընտանեկան հարկի տակ էին մեծանում, ժամանակակից մարդն ուզում է իր օջախը, իր տունն ունենալ, հարմարավետ պայմաններում ապրել»,** – գյուղապետի այս դիտարկման հետ դժվար է չհամաձայնել:

Հընթացս տեղեկանում ենք, որ այսօրվա դրությամբ Անգեղակոթից բացակայում է 250 երիտասարդ, ովքեր հիմնականում ապրուստի միջոց հայթայթելու նպատակով արտագնա աշխատանքի են մեկնել: Վերջին տասը տարում Անգեղակոթից հեռացել է 50-ից ավելի ընտանիք: **«Հիմնականում ազատագրված տարածքներում են բնակություն հաստատել, բայց Անգեղակոթը համայնք է իր բնակիչներով, մեր տարածաշրջանում իր ուրույն դեմքն է ունեցել ու սահման պահող գյուղ է»,** – բացատրում է զրուցակիցս:

Հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին հակառակորդի համազարկերը հասել են Անգեղակոթ: 1992-ի հունիսի 27-ին Նախիջեւանի, Բիչանակի (Բաթաբաթի) սահմանագլխից հրետակոծվել է Անգեղակոթը: Միջադեպը, բարեբախտաբար, անցել է առանց մարդկային կորուստների: Գյուղի մասին պատմող գրքի՝ «Անգեղակոթի պատմության կարեւոր անցքերի ժամանակագրություն» հավելվածից տեղեկանում ենք, որ այդ դեպքի կապակցությամբ լրագրող, հրապարակախոս Վանո Խաչատրյանը (Զանգեզուրցի) մեծածավալ՝ վեց էջից բաղկացած մի նամակ (ադրբեջաներեն), Անգեղակոթի վրա թափված բեկորների կույտի հետ, ուղարկեց Նախիջեւան՝ Հեյդար Ալիեւին: Հետագայում, երբ հարեւան հանրապետության կողմից մեր երկրին պատերազմ պարտադրվեց, 120 անգեղակոթցի մասնակցեց մերօրյա ազատամարտին, որոնցից 12-ը չտեսավ հայրենի գյուղի վրա բացվող խաղաղ առավոտները:

Այդքան պատմամշակութային հուշարձաններ, հնավայրեր ունեցող համայնքը չի՞ կարող ընդգրկվել տուրիստական որեւէ երթուղու մեջ: Համայնքապետն ասում է, որ նախ համայնքում պետք է ստեղծվեն ենթակառուցվածքներ, պիտի նորոգվի Սիսիան-Երեւան միջպետական մայրուղուց մինչեւ Անգեղակոթ ընկած 2.5 կմ երկարությամբ ճանապարհահատվածը: **«Ճիշտն ասած պետությունից էլ չեմ կարող շատ բան պահանջել, որովհետեւ պետությունն էլ ծանր վիճակում է, բայց ցանկալի կլիներ, որ ավելի շատ ուշադրություն դարձվեր գյուղին եւ գյուղաբնակին»,** – հրաժեշտից առաջ փոխանցեց համայնքապետը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Եղծ աղանդոց եւ շառլատանության

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

թյան արժանապատվության վրա: Ի վերջո ինչո՞ւ գնաց ազգային մեր չսպիացած վերքի՝ Հայոց ցեղասպանության վրա ձեռքեր տաքացնելու, մեր սրբասուրբ արժեքի՝ Հայոց բանակի անունն իբրեւ վահան գործածելու անբարո ճանապահով…

Ի՞նչ է իրականում կատարվում:

Կապանի լեռնահանքային կոմբինատի վարիչի պաշտոնը զբաղեցնող այդ անձնավորությունը, ակնհայտորեն ձախողվելով ձեռնարկության գործերը կառավարելու մեջ, փորձում է ջրի երեսին մնալ ու սեփական վարկանիշը վերահյուսել՝ մեր ազգային ցավն ու ազգային արժեքները յուր անմաքուր ոտքերի տակ մատաղ անելով: Ավելին՝ առայժմ (մեզ համար) անհայտ կենսագրությամբ այդ տղան, ով առավել անհայտ հանգամանքներում ու կասկածելի մեթոդներով հայտնվել է քաղաքաստեղծ ձեռնարկության ղեկին, օգտվելով սեփականատիրոջ եւ իշխանությունների թողտվությունից, փորձում է ինչ-որ անհեթեթ, սին, կասկածելի, որոշ դեպքերում՝ ծիծաղելի ու ողորմելի արժեքներ պարտադրել մեզ:

Նրա ձեռնարկումներից ու տվյալներից մի քանիսին, ինչպես եւ որոշ արտահայտությունների, այնուամենայնիվ, արժե անդրադառնալ փոքր-ինչ հանգամանալից:

Հայոց բանակի օրվա առթիվ այցելում է Կապանի՝ այլեւս հայտնի մանկապարտեզ եւ ելույթ ունենում երեխաների առջեւ: Տեղի է ունենում անհավատալիք… Աշխարհի մասին միայն հեքիաթներով, խաղալիքներով, Ձմեռ պապով ու Ձյունանուշով պատկերացում կազմող մանուկներին պատմում է ՀՀ վարչապետի հետ ունեցած իր հանդիպման մասին: Պակերացնո՞ւմ եք, 2, 3, 4 տարեկան երեխաներին ինչ-որ մեկը պատմում է ՀՀ վարչապետի, սփյուռքահայության, Ջավախքի, Նախիջեւանի, Արեւմտյան Հայաստանի, ծովից ծով Հայաստանի, պետական սահմանի մասին…

Ինքն էլ, համոզված եմ, գիտեր, որ երեխաներից եւ ոչ մեկն իրեն չի լսելու եւ չի հասկանալու: Բայց ինքը, իրականում, այդ ամենը երեխաների համար չէր ասում: Երեխաներն ընդամենը ֆոն էին, իսկ ավելի ճիշտ՝ կենդանի դեկորացիա՝ մարզկենտրոնի բնակչությանը «Խուստուփ TV»-ի միջոցով ինչ-որ «մեսիջներ» ուղարկելու, իր լինելության անսասանությունն «ավետելու» համար (30 հունվարի 2015թ.):

Իսկ թե ինչու է այդ լրատվամիջոցը Հրաչի անհոդաբաշխ եւ անլուրջ մտավարժանքները մանրամասն ու հետեւողականորեն եթեր սփռում, հասկանալի է մասամբ: Խմբագրի առումով պարզ է ամեն ինչ. նա միաժամանակ Հրաչի խորհրդականն է «ներքաղաքական հարցերով», ինչի համար եւ վարձատրվում է: Հասկանալի չէ լրատվամիջոցի հիմնադրի (սեփականատիրոջ)՝ Արարատ Կարապետյանի պահվածքը: Հպարտ ու արժանապատիվ մարդու համբավ ունեցող այդ անձնավորությունն ինչպե՞ս է թույլ տալիս, որ իր հեռուստատեսությունը դառնա Հրաչի ինքնահաստատման հարթակ՝ այն էլ մեր փոքրիկներին դեկորացիա դարձրած, ինչպես եւ մեր իրականությունն ու արժեքային համակարգը հետեւողականորեն աղավաղելով:

Փետրվարի 5-ին Հրաչը հանդես է եկել մեկ այլ հայտարարությամբ եւս, որի վրա հրավիրում ենք Սյունիքի մարզի դատախազ Արմեն Աֆանդյանի եւ մարզի ոստիկանապետ, գնդապետ Վախթանգ Ավագյանի ուշադրությունը:

Ահա հայտարարությունից մի հատված. **«….Սպառնում են իմ ընտանիքի ապահովության, դուստրերիս Նարէի եւ Մանեի եւ իմ անձնական անվտանքության»:**

Մենք, իհարկե, չենք հավատում այդ հայտարարության լրջությանը եւ կարծում ենք, որ Հրաչն ընդամենը կամենում է իր պսպղուն ճաղատը ծածկել հալածյալի «պսակով»:

Այդ բոլորով հանդերձ՝ իրավապահ մարմինները, ըստ էության, պետք է անհապաղ հետաքննություն սկսեն, այլապես ամեն ինչ չէ, որ հասկանալի կլինի: Դատեցեք ինքներդ՝ հասուն եւ առողջ մի անձնավորություն (նրա առողջական վիճակը կասկածի տակ դնող որեւէ փաստաթուղթ մեր ձեռքի տակ չկա) հայտարարում է. **«Սպառնում են իմ ընտանիքի ապահովության, դուստրերիս Նարէի եւ Մանեի եւ իմ անձնական անվտանքության»:** Եվ չգնալ այդ հայտարարության հետեւից՝ նշանակում է խախտել մեզանում գործող օրենսդրությունը:

Նախկինում էլ, ի դեպ, Հրաչը նմանատիպ տեխնոլոգիա էր կիրառում: Օրինակ, հայտարարում էր, թե իբր կոմբինատից գողություն է կատարվել՝ մեծ չափի հասնող (նույնիսկ թվեր էր նշում), նշում էր նաեւ, որ ինքը գիտի, թե ովքեր են կատարել գողությունը, բայց ենթադրյալ գողերի անունները չէր տալիս, իսկ արդյունքում գողությունը չէր բացահայտվում:

Կամ՝ քանի-քանի անգամ իր ասուլիսներում ու հանդիպումներում հանրապետության մի քանի գերատեսչությունների ու նախարարությունների (կոմբինատի հետ ունեցած հարաբերություններում) ուղղակիորեն մեղադրել է շորթումների մեջ… Եվ ոչ մի արձագանք իրավապահ մարմինների ու պետական ատյանների կողմից:

Սակայն, ինչպես տեսնում ենք, վերջին հայտարարության մեջ միայն հալածյալի «պսակը» Հրաչին չի բավարարում: Նա ուզում է միաժամանակ կույսի պատվանդանին կանգնել՝ ամպոտ ոտքերով: Եվ ինչ-որ «խումբ»-ի ու հկ-ների գրանտակեր է անվանում:

Նման իրավիճակների համար է ասված՝ լա՞նք, թե՞ խնդանք:

Տո, հեր օրհնած, ավելի լավ չէ՞ «կրանտակեր» լինել, քան՝ ընդերքակեր ու հանքակեր…

Կամ հայտարարում է ինչ-որ մարդկանց մասին (անուններ չնշելով), ովքեր՝ **«հսկայական գումարներ են «կուտակել» այս կամ այն ձեվերով հիմնարկից մինչեւ իմ գալը, եւ իմ ներկայությամբ իրանք չեն կարողանում այդ գումարներ ալեւս տանել հիմնարկից»:**

Ոչ միայն զարմանալի, այլեւ ծիծաղելի իրավիճակի ենք բախվում. գումարներ տանելու, փող կուտակելու հարցում մեղադրանքներ է ներկայացնում մի մարդ, ում կողմից Կապանի կոմբինատի ղեկավարման ընթացքում կատարված բոլոր ստուգումների արդյունքում աննախադեպ չափով տուգանքներ պարունակող ակտեր են գրվել: Միայն վերջին ստուգմամբ՝ մոտ 9 մլն դոլարի հասնող տուգանք: Եվ դատարանով հաթաթա տվող տղան առայժմ որեւէ խոսք չի ասում ո՛չ դատական ընթացքի, ո՛չ էլ «ստվերի» առաջացման պատճառների մասին:

Ինչ վերաբերում է Հրաչից փող ուզողներին, ապա մեր քաջալերանքի խոսքն ենք ուղղում նրանց: Շատ տարօրինակ կլիներ, եթե Հրաչից կապանցիները փող չուզեին: Ինքը Կանադայից Կապան է եկել բացառապես փող աշխատելու համար (հո չի՞ կարող ասել՝ եկել եմ Կապանն ու Հայաստանը շենացնելու), բայց զարմանում է, որ կապանցին իր քաղաքում, իր առողջության հաշվին հարատեւող ձեռնարկությունից փող է ուզում: Իսկ կա՞ հակառակ վիճակ. այսինքն՝ կարո՞ղ է Հրաչը տալ մեկ մարդու (գոնե մեկ մարդու) անուն՝ Կապանից, ով իր հետ շփվում է առանց փողի ակնկալիքի: Ուրիշ ինչի՞ համար նրան պետք է մարդատեղ դնեն ու ժպտան…

Փետրվարի 4-ին Հրաչը հայտարարեց. **«Խնդրեմ Ապրիլ 11 նկատի ունենալ որպես գրավված օր»:**

Նախ, ընթերցողն իր մեջ ուժ պիտի գտնի եւ ուշադրություն չդարձնի այդ տղայի լեզվին, ոճին, ուղղագրությանը՝ ո՛չ արդի հայերեն է, ո՛չ արեւմտահայերեն, ո՛չ պարսկահայերեն, ո՛չ… Ընթերցողը պարզապես պետք է ջանք գործադրի եւ ենթադրություններ անի, թե ինչ է կամենում ասել նա:

Ընթերցելով վերոգրյալ հայտարարությունը՝ մենք էլ ենթադրաբար կարծում ենք, որ Հրաչն ինչ-որ միջոցառում է կամենում անել՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված, որին հրավիրում է նաեւ դպրոցների ու նախակրթարանների տնօրեններին…

Ակնհայտ անգրագետ այդ արտահայտությունը՝ մի կողմ, քանզի նրա բոլոր խոսքերն են այդպես, եւ վաղուց չենք զարմանում:

Ապրիլի 11-ի միջոցառման ի՞նչ սցենար կարելի է ենթադրել:

Մեր ենթադրությունը կառուցելու համար հիշենք՝ Հայոց ցեղասպանությունը հայ մարդուն սպանելու, հայ մարդու ապրելու իրավունքը ոտնահարելու, հայ մարդու արժանապատվության վրա թքելու, հայ մարդուն իր բնօրրանից օտարելու բացառիկ օրինակ է համաշխարհային պատմության մեջ: Եվ մեր ազգային մեծերը (Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց, Ակսել Բակունց, Նիկողայոս Ադոնց, Հրանտ Մաթեւոսյան…) հորդորել են՝ ցեղասպանության զոհերի հիշատակը ոգեկոչելիս (ճանաչումի եւ պահանջատիրության կոչերից առաջ) նախեւառաջ հիշել՝ երբեք եւ ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ հայ մարդու իրավունքների ոտնահարում, եւ պետք է պայքարել նրանց դեմ, ովքեր ոտնակոխ են անում հայ մարդու արժանապատվությունը:

Եվ ուրեմն՝ ապրիլի 11-ի կապանյան միջոցառման ժամանակ, հուսով ենք, կլսենք Հրաչի հաշվետվությունն առ այն, թե իր պաշտոնավարման ընթացքում քանի՞ հայ մարդու իրավունք է ոտնահարել Կապանում, քանի՞ հոգի են իրենց իրավունքները վերականգնել դատարանի միջոցով, ներկայումս կոմբինատից քանի՞ մարդու հայցադիմում կա դատարանում՝ ոտնահարված իրավունքների վերականգնման խնդրանքով:

Այդ օրը, հուսով ենք, կլսենք Հրաչի բացատրությունն այն մասին, թե ինչու ինքը, դրսից եկած աշխատակիցները բազմապատիկ անգամ ավելի աշխատավարձ են ստանում, քան հարյուրավոր մետր խորությամբ ընդերքում աշխատող հանքագործները:

Շառլատանության մեկ դրսեւորում եւս. փետրվարի 6-ին Հրաչը հայտարարեց, որ ապրիլի 24-ին մարդիկ չեն աշխատելու՝ դա ներկայացնելով իբրեւ բարի կամքի դրսեւորում իր կողմից, ապրիլի 24-ի հանդեպ իր առանձնահատուկ վերաբերմունքի արտահայտություն՝ շրջանցելով ակնհայտ իրողությունը, որ ապրիլի 24-ի հիշատակի օրը պետականորեն եւ շատ վաղուց Հայաստանում հայտարարված է ոչ աշխատանքային:

Հունվարի 30-ին «Խուստուփ TV»-ի օգնությամբ ականատես ենք լինում մեր հակահերոսի մի նոր ներկայացման: Նա հիշեցնում է. **«Բոլորիս պարտականությունն է՝ այս երկրի սահմանները, ներկա եւ ապագա, ներառյալ Նախիջեւանը, ներառյալ Ջավախքը, ներառյալ Արեւմտյան Հայաստանը, ծովից ծով Հայաստանը պաշտպանել նույնիսկ արյան գնով»:** Եվ իր հայրենասիրությունն ապացուցելու համար հիշեցնում է, որ նախօրյակին այցելել է Նախիջեւանի սահման, ֆեյսբուքյան դաշտում տարածում իր լուսանկարը՝ ինչ-որ զենքով:

…Սյունիքում, որտեղ ամեն մի քար ու թումբ քաջի շիրիմ է, որտեղ լավագույն 500 տղաները զոհվեցին միայն Արցախյան պատերազմում, որտեղ նահատակ ազատամարտիկների այրիացած կանայք մինչեւ հիմա սեւազգեստ են, որտեղ… Հայտնվում է մի կիսագրագետ դասատու (կրկնում ենք՝ անհայտ կենսագրությամբ, նախորդ տնօրենին կասկածելի հանգամանքներում ու կասկածելի մեթոդներով տապալելու գնով Կապանի լեռնահանքային կոմբինատի ղեկավար դարձած) եւ սյունեցիներիս հայրենասիրության դաս տալիս:

Եվ ի՞նչ է մնում մեզ. այցելել ազատամարտիկների շիրիմներին եւ ծնկաչոք ներողություն խնդրել նրանցից, որ իրենց ոգեշնչող կերպարից այլեւս մենք չենք զորանում, որ այլեւս զորանում ենք ինչ-որ մի «գաստարբայտերի» կողմից ներմուծվող անհեթեթ ու անհոդաբաշխ նախադասություններով…

Հրաչի շառլատանության ու ցինիզմին վերջ տալու համար, ըստ էության, մի փոքր հիշեցում անելու կարիք կա:

Կապանի հանքարդյունաբերական կոմբինատը, ինչպես քանիցս ենք նշել, քաղաքաստեղծ ձեռնարկություն է, որ հիմնավորվել է մի քանի սերունդների տքնաջան աշխատանքով: Այսօր էլ բացառիկ նշանակություն ունի մարզկենտրոնի համար:

Կապանի կոմբինատը, անկախ նրա սեփականության ձեւից, մեր ազգային արժեքներից է: Եվ անկախ այն բանից, թե ով է ձեռնարկության օրվա ղեկավարը՝ Գառնիկ Մեխակիչ, Մարտուն Հակոբյան, Ֆալետտա, Հրաչիկ, ձեռնարկությունը պարտավոր է իր հնարավորությունների սահմաններում օգնել ե՛ւ Կապան քաղաքին, ե՛ւ մեր ազգային բանակին: Այնպես որ հազարերորդական հարց է, թե ով է կոմբինատի օրվա պատասխանատուն: Եվ մեծագույն անբարոյականություն է, երբ կոմբինատի օրվա ղեկավարը քաղաքին ու ազգային բանակին տրվող ամենաչնչին օգնությունն անգամ վերագրում է իր անձին, իր բարի կամեցողությանը…

Մինչդեռ պետք է խնդրել Բարձրյալին, որ Կապանում օրերից մի օր չհայտնվի զորավոր մի քաղաքապետ ու տեղական հանրաքվեի միջոցով հավելյալ հարկեր չդնի կոմբինատի վրա՝ հօգուտ քաղաքի:

Այնուհետեւ՝ Հրաչն իր ելույթներում քանիցս նշել է (եւ շարունակում է նշել), որ կոմբինատը վնասով է աշխատում եւ գործում է միայն ու միայն սեփականատիրոջ ներդրումներով:

Հիմա ճիշտ ժամանակն է, որ նա (գոնե մեկ անգամ) հանրությանը հաշվետվություն տա, թե իր պաշտոնավարման ընթացքում որքան ներդրում է կատարել սեփականատերը, թե ինչու տասնամյակներ շարունակ (մեծ մասամբ) շահույթով աշխատող ձեռնարկությունն այլեւս ինքնածախսածածկող չէ եւ գոյատեւում է սեփականատիրոջ ներդրումների հաշվին: Եվ, ի վերջո, եթե ընկերությունն անընդհատ վնասով է աշխատում եւ պահվում է սեփականատիրոջ ներդրումներով, ապա ինչո՞ւ է կանադացի սեփականատերը սիրահոժար, հենց այնպես իր փողերն ուղարկում Կապան:

Փետրվարի 6-ին Հրաչն այսպես կոչված ասուլիս էր անցկացրել: «Սյունյաց երկրին» նախապես ուղարկված հրավերին՝ ասուլիսին մասնակցելու համար, մերժել ենք՝ ասուլիսը գնահատելով հերթական անբարո բեմադրություն եւ կապայան հանրությանը մոլորեցնելուն միտված վարժանք:

Ասուլիսի հիմնական թեման, որքանով հասկացանք, «Սյունյաց երկրի» հայտնի հոդվածն էր՝ **«Ջոնաթան Գուդմանը մինչեւ ե՞րբ է հանդուրժելու Հրաչ Ջաբրայանի գոյությունը Կապանում»:**

Նա, ինչպես եւ սպասվում էր, հոդվածում բարձրացված հարցերից որեւէ մեկին չանդրադարձավ. ինքն այդքան քաջություն եւ ազնվություն չունի, որ կարողանա պատասխանել որեւէ հարցի: Նման իրավիճակներում, փորձն է ցույց տալիս, ինքը ցեխ է շպրտում թերթի վրա՝ բուն խնդրից փախչելու միտումով: Այս անգամ, այդ բոլորով հանդերձ, հռետորաբանության մեջ ավելացրեց Մաքսիմի անչափ հաճելի եւ երանելի անունը:

Ճիշտն ասած՝ չէինք ցանկանա Մաքսիմի եւ յուր սպասավորների հարցը (այն էլ Հրաչի մատուցմամբ) քննարկման առարկա դարձնել վերստին, քանզի չենք կարող շրջանցել քրիստոնեական պոստուլատը՝ հանգուցյալների (այդ թվում՝ քաղաքական հանգուցյալների) մասին՝ կա՛մ լավը, կա՛մ ոչինչ:

Համ էլ Սյունիքում այնքա՜ն արագ են մոռացել նրան եւ որդուն… Կարծեք նման գոյություններ չեն էլ եղել այս կողմերում:

Ինչ վերաբերում է «Սյունյաց երկրի» կողմից Կապանի կոմբինատից «փող ուզելուն»… 2014-ի աշնանը նամակ էինք հղել ձեռնարկության վարիչին՝ թերթի 2015-ի բաժանորդագրությանը մասնակցելու համար, ինչը մնացել էր անպատասխան:

Սա է կոմբինատից (եւ ոչ Հրաչից) «փող ուզելու» ողջ պատմությունը, ինչի մեջ (որքան էլ կամենանք) արտառոցության նշույլ չենք գտնի: Համ էլ՝ եթե ինչ-որ մեկը (մեկ անգամ արդեն նշել ենք) Կանադայից եկել ու հանքագործների հաշվին փող է շինում եւ այդ ասպատակությունը համարում հայրենասիրություն, ապա ինչո՞ւ անբնական պիտի համարել մարզային միակ պարբերականի պահպանության համար (բաժանորդագրության եղանակով) միջոցներ խնդրելը:

Թերթի բաժանորդագրությունից հրաժարվելն էլ, ըստ էության, ծանոթ ոճ է, եւ արտակարգ պատահար չենք համարում: Ավելին՝ Հրաչի պարագայում դա շատ վերծանելի պահվածք է: Նախ՝ նրան պետք է թույլ տային (այն մարդիկ, ում ձեռքերում գտնվում է), այնուհետեւ՝ ինքը չէր էլ կարող գործընկեր լինել մի կառույցի հետ, որից կանխիկ դրամի ակնկալիք չունի:

Առհասարակ ժամանակն է, որ մեր պետական ֆինանսական գերատեսչությունն ու ազգային անվտանգության մարմինը պարզեն մի շատ հասարակ հարցի պատասխան՝ ի՞նչ սկզբունքով է Հրաչը մատակարարների հետ պայմանագրեր կնքում, ի՞նչ սկզբունքով է ընկերության համար ծառայություններ, աշխատանքներ պատվիրում:

Այդ հարցի պարզաբանումը հնարավորություն կտա

Կապան-Սումգայիթ առեղծվածը

Նորագույն պատմություն

ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

Չնայած այդ իրադարձությունները տեղի են ունեցել 27 տարի առաջ, սակայն այսօր էլ ազերի եւ այլազգի որոշ հեղինակներ շարունակում են հորինել նոր վարկածներ ու խեղաթյուրել ճշմարտությունը: Իսկ դրանք ավելի քան վիրավորական են հայ ժողովրդի համար, մանավանդ որ դրանում ակտիվ մասնակցություն ունեն որոշ հայ մտավորականներ:

Այսպես. 2006 թվականի նոյեմբերի 24-ին Երեւանում տեղի է ունեցել աղմուկ բարձրացրած մի շնորհանդես, ծագումով հոլանդացի, անգլախոս ոմն Թոմաս դե Վաալի «Սեւ այգի» կոչված գրքի շուրջ: Այդ գրքի լրամշակված երկրորդ հրատարակության շնորհանդեսը Երեւանում տեղի է ունեցել 2014թ. աշնանը: Առաջին շնորհանդեսի ժամանակ աղմուկ է բարձրացել այդ գրքում տեղ գտած մի շարք սխալների շուրջ, որի մասին անդրադարձել է «Голос Армении» թերթը 2007թ. նոյեմբերի 24-ի համարում: Թվում է, թե պարոն Թոմասն իր գրքի վերահրատակության մեջ վերացրած կլինի նախկին սխալները: Սակայն՝ ոչ:

Ո՞վ է Թոմաս դե Վաալը. լրագրո՞ղ, պատմաբա՞ն, թե՞ ինչ-որ գործարար: «Голос Армении» թերթի հաղորդումից իմանում ենք, որ նա ղեկավարել է բրիտանական Պատերազմ եւ խաղաղություն ինստիտուտի կովկասյան բաժանմունքի Բաքվի գրասենյակը: Հասկանալի է, թե նրա վրա ինչ ազդեցություն կարող է թողած լինել այդ միջավայրը:

Դեռեւս գրքի առաջին շնորհանդեսի ժամանակ խոսք է բացվել Կապան-Սումգայիթ առեղծվածի մասին: Թե առաջին եւ թե երկրորդ հրատարակություններում ասված է, թե **«Որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ներկայիս «Ղարաբաղյան հարցի» սկիզբ սովորաբար նշվում է 1988 թվականի փետրվարը: Բայց առաջին բռնությունը /ընդգծումը մերն է-Հ.Ա./, որոնց մասին անգամ տարածաշրջանում քչերը գիտեն, տեղի է ունեցել դրանից մի քանի ամիս առաջ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի այլ վայրերում»:** Իբրեւ 1987թ. նոյեմբերին Բաքվի երկաթուղային կայարան ժամանած **«գնացքի երկու բեռնատար վագոններով եկած ադրբեջանցիները եկել էին Կապանից՝ ազգամիջյան բռնությունների արդյունքում: Այս միջադեպի մասին շատ քիչ բան է հայտնի, իսկ լրատվամիջոցներում առհասարակ ոչինչ չի հաղորդվել: Այնուհանդերձ կան ականատեսներ»:** Եվ որպես «ականատես» վկայակոչում է բաքվեցի հայ այրի Սվետա Փաշաեւային, ով իբր պատմել է, թե ինչպես են փախստական ադրբեջանցիները եկել Բաքու մերկ երեխաներով, կեղտակոտրույս գյուղացիներ՝ երկարամազ ու մորուքավոր, տարեցներ՝ երեխաներով: Եվ որ ինքը, Սվետան, հագուստ ու սնունդ է տարել նրանց համար /Թոմաս դե Վաալ, «Սեւ այգի», Երեւան, 2014, էջ 43-44/:

«Հոգատար» այրի հայուհուն պարոն Թոմասի կողմից ներկայացնելը շատ միամիտ է եւ ծիծաղելի: Նախ՝ այդ հայուհին, եթե ճշմարտություն է պատմել, ապա ինչո՞ւ է հեղինակին խնդրել իր անուն-ազգանունը փոխել: Հետո՝ հազիվ թե 1987-ի նոյեմբերին «դռները բաց… մեխված երկու երկար տախտակներով, որ մարդիկ ցած չընկնեն» ապրանքատար վագոնները թույլտվություն ունենային անցնել Բիլյաջար կայարանը եւ հայտնվեին քաղաքի կենտրոնում: Եթե դա հնարավոր լիներ, ապա դրա նախաձեռնողներն անպայման միտինգ կհրավիրեին, աղմուկ-աղաղակ կբարձրանար, չնայած այն ժամանակ դա արգելվում էր, եւ լրատվության միջոցները չէին կարող որեւէ բան հրապարակել: Բացի այդ. մի՞թե քաղաք հասած ապրանքատար վագոնները միայն հայուհի Սվետան է տեսել եւ օգնություն ցույց տվել այդ «դժբախտներին»: Մի՞թե Սվետայից բացի այդ երեւույթը ոչ մեկը չի տեսել միլիոնանոց Բաքվում:

Պարոն Թոմասն առաջ մղելով իր հորինածը, ավելացնում է, որ իբր 1988-ի հունվարի 25-ին ազերի պատմաբան, հայատյաց Արիֆ Յունուսովը /ներկայումս կնոջ հետ գտնվում է Բաքվի բանտում-Հ.Ա/ ակադեմիա աշխատանքի գնալիս ականատես է եղել ադրբեջանցիների՝ **«Կապանից փախչելու նոր վկայություն: Կառավարության շենքի մոտ կանգնած էին չորս կարմիր «Իկարուս» ավտոբուսներ, որոնք իբր գտնվում էին սոսկալի վիճակում: Ուղեւորները հիմնականում կանայք էին, երեխաներ ու ծերեր: Երիտասարդները մի քանի հոգի էին: Նրանցից շատերը ծեծված էին: Նրանք գոռում էին /նույն տեղը, էջ 44/»**: Ինչպիսի՜ ստահոդ անբարոյականություն: Այդ ինչպե՞ս է, որ երկու դեպքում էլ «փախստականները» հիմնականում կանայք էին, երեխաներ եւ տարեցներ: Իսկ որտե՞ղ էին գտնվում այդ ժամանակ Կապանի շրջանում բնակվող շուրջ հինգ հազար ազերի տղամարդիկ, որոնց կանանց, երեխաներին եւ ծնողներին այդպիսի զարհուրելի վիճակում հասցրել էին Բաքու: Կարո՞ղ է պարտիզան էին եւ կռվում էին հայերի դեմ:

Անգլախոս հեղինակը պնդում է, որ **«Փախստականների այս վաղ հոսքի ամբողջական պատմությունը պատմված չէ, մեծ մասամբ այն պատճառով, որ Ադրբեջանի իշխանություններն արել էին հնարավոր ամեն բան այդ տեղեկությունը կործելու համար»:** Շատ լավ. այդ դեպքում, պարոն Թոմաս, ինչո՞ւ այդ նույն իշխանությունները թույլատրեցին «ջարդված» մարդկանցով լեցուն երկու ապրանքատար վագոններն ու չորս «Իկարուսները» երեւան Բաքվի կենտրոնում: Դուք եք մեջբերում, որ Կապանի շրջկոմի երկրորդ քարտուղար Արամայիս Բաբայանի այն պնդումը, թե ինքը չի մտաբերում, որ 1988թ. փետրվարից առաջ իրենց շրջանից ադրբեջանցիներ են հեռացել: Այստեղ չեք սխալվում, երբ տողատակ գրում եք, թե **«հայերը կտրականապես հերքում են, թե Հայաստանից ադրբեջանցիներ են մեկնել մինչեւ Ղարաբաղի ոտքի ելնելը»** /էջ 44/: Այնուհետեւ խոստովանում եք, որ Կապանի իրադարձությունների վերաբերյալ «որեւէ փաստաթղթի հաստատում» չեք տեսել: Չեք տեսել, որովհետեւ այն չկա, որտեղի՞ց տեսնեք:

Ըստ էության՝ անկախ նրանից, թե պարոն Թոմասն իր ասածները հաստատելու համար ում վկայությունների վրա է հենվել, պարզապես շառլատանություն է, կեղծ եւ լիովին հորինված: Մի՞թե դա չի ապացուցում այն, երբ առանց ամոթի գրում եք. **«Աղանբեկյանի միջամտությամբ էր, որ ադրբեջանցիներն առաջին անգամ տեղեկացան իրենց դեմ ուղղված հայկական շարժման մասին»** /էջ 46/: Պարոն. մի՞թե մինչեւ հիմա չեք հասկացել, որ Ղարաբաղյան շարժումն ուղղված չէ ադրբեջանցիների դեմ, այլ պաշտպանում է իրենց ինքնորոշման իրավունքը: Հետո՝ արցախցիների 1986-1987թթ. կատարած ստորագրահավաքը, որի արդյունքում ավելի քան 50 հազար ստորագրությամբ փաթեթը Մոսկվա է տարվել եւ ԽՄԿԿ Կենտկոմի ընդունարան հանձնվել 1987-ի նոյեմբերի վերջին, այդ մասին շատ լավ գիտեին Բաքվում, մանավանդ Ադրբեջանի ՊԱԿ-ը: Այնպես որ ձեզ միամտի տեղ մի դրեք եւ իզուր եք պաշտպանում ազերի հեղինակների այն պնդումը, թե իբրեւ ադրբեջանցիները Կապանից հեռացել են «վիրակապումներով» /էջ 60/:

Այդ. 1987թ. վերջից, մանավանդ 1988-ի հունվար-փետրվար ամիսներին, Հայաստանի որոշ տեղերից, մանավանդ Կապանից, հեռացել են ադրբեջանցի ընտանիքներ: Մինչեւ սումգայիթյան ցեղասպանությունը՝ այդ մասին թե Ադրբեջանում եւ թե Հայաստանում լրատվամիջոցները ոչինչ չեն հաղորդել: Միայն մարտի սկզբին Կապանի շրջանային «Ղափան» թերթը հաղորդել է, որ վերջերս Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադարձությունների առթիվ շրջանում եղել են արտադրության ռիթմի խախտում, հասարակական կարգ ու կանոնի խանգարում, շրջանից առանձին քաղաքացիների ու ընտանիքների մեկնելու դեպքեր: Այդ մասին այն ժամանակ ժողովրդական պատգամավորների Ղափանի շրջխորհրդի նախագահ Կ.Մկրտչյանը տվել է հետեւյալ բացատրությունը. **«Այս ամենը, եթե հաշվի չառնենք առանձին բացատրություններ, բացարձակապես զուրկ են որեւէ հիմքից: Մեզ մոտ այդ օրերին չի արձանագրվել հասարակական կարգի խախտման ոչ մի դեպք: Այդ օրերին բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, տրանսպորտային, շինարարական եւ մյուս կազմակերպությունները աշխատել են արտադրական նորմալ ռիթմով: Ամենուրեք հանդես են բերվել բարձր կազմակերպվածություն, որը հետեւում էր նույնիսկ մարդկային առօրյա փոխհարաբերություններում»:** Շրջխորհրդի նախագահը հայտարարել է, որ տագնապի համար ոչ մի հիմք չկա եւ չի թույլատրվի ոչ մի անպատասխանատու գործողություն /«Ղափան», 01.03.1988/: Վերջերս հանդիպելով ականատես, այն ժամանակ «Ղափան» թերթի լրագրող Վահրամ Օրբելյանին, նրան խնդրեցի պատասխանել հետեւյալ հարցին. 1987թ. նոյեմբերից մինչեւ սումգայիթյան ցեղասպանությունն ընկած ժամանակաշրջանում Կապանի շրջանում ադրբեջանցիների նկատմամբ ճնշում գործադրվե՞լ է: Պարոն Օրբելյանն այսպես պատասխանեց.

– Աշխատանքի բերումով ամեն օր հանդիպում էի բնակչության հետ: Այդ օրերին, իրոք, որոշ ադրբեջանցի ընտանիքներ հեռացել են շրջանից: Նրանք իրենց բնակարանները փոխանակում կամ վաճառում էին ու հեռանում՝ տանելով իրենց ամբողջ ունեցվածքը: Նրանք գնում էին հանգիստ ու խաղաղ, առանց որեւէ միջադեպի: Գնում էին այն հույսով, որ Ադրբեջանում հողատարածություն են ստանալու եւ բնակարան կառուցելու: Չեմ հիշում ընդհարման որեւէ դեպք: Նման բան չի եղել, շատերը հորինվել են: Անշուշտ՝ կային դժգոհ անձնավորություններ՝ կապված Ղարաբաղի հիմնախնդրի հետ…

Կուսակցության Ղափանի շրջկոմի առաջին քարտուղար Ռոլանդ Ղոնյանը 1988-ի մայիսի 3-ին Հայկոմկուսի կենտկոմ ուղարկած զեկուցագրում նշում է, որ փետրվարի 26-27-ին Ղափանում այսպես կոչված ինքնաստեղծ կոմիտեներ չկային, տեղի ունեցած միտինգները ծնվել են ինքնաբերաբար, կրել են «հուզական պոռթկումի բնույթ»: Այդ միտինգներին մասնակցել են նաեւ ադրբեջանցիներ, որոնց ժամանակ **«ժողովուրդների բարեկամություն սասանող կոչեր, լոզունգներ, արտահայտություններ չեն եղել»** /ՀԱԱ, ֆ.1, գ.127, գ.599, թ.67-68/: «Ղափան» թերթի էջերում ելույթ ունեցած ՀՍՍՀ կուլտուրայի վաստակավոր գործիչ Մ.Համբարձումյանը, Սիզնագի պետտնտեսության աշխատող, աշխատանքի վետերան Զ.Հուսեյինովը եւ ուրիշներ մերկացրել են բամբասանքները, որոնք փորձում էին երկու ժողովուրդներին գրգռել իրար դեմ: Ահա թե ինչ է պատմել Վերին Գյոդաքլու գյուղի տնտեսության կթվորուհի Քուբուրա Գադիրովան. **«Ես հիմա միայն համոզվեցի, թե ինչ ծանր հետեւանքներ կարող է թողնել սուտ լուրը: Մի քանի օր անընդհատ մեզ մոտ Վերին Գյոդաքլու, մեկը մյուսից սարսափելի լուրեր էին հասնում. այս ինչ գյուղում հայերը այսպես են արել, այստեղ այսպես են արել եւ տարօրինակն այն էր, որ այդ «լրաբերների» մեջ չկար գոնե մեկը, որ իր աչքով տեսած կամ ականջով լսած լիներ կատարվածի մասին: Միայն մի գլուխ կրկնում էին. ասում են, տեսել են, պատմում են… »** /«Ղափան», 05.03.1988/: Քուբուրա խանումին պաշտպանում է թերթի հաջորդ համարում տպագրված «Ստի ոտքերը կարճ են» վերա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 6

վերջնականապես ամբողջացնել Հրաչի հայաստանյան հետաքրքրությունների իրական շրջանակը:

Նշված ասուլիսում հերթական անգամ հայտարարեց, որ իր գործունեության վերաբերյալ դժգոհությունները, ինչ էլ անեն, Կանադա չեն հասնի, իսկ եթե անգամ հասնեն, այնտեղ անուշադրության կմատնվեն:

Դա, իմիջիայլոց, ասուլիսի ամենաանկեղծ դրվագն էր:

Դա եւս մեկ խոստովանություն է այն մասին, որ Ջոնաթան Գուդմանի (ձեռնարկության սեփականատիրոջ) համար Կապանի կոմբինատի ներկայիս կացությունը եւ նրա վարիչի շուրջ ձեւավորված հանրային տրամադրություններն անհետաքրքիր թեմա են:

Ելնելով այդ իրողությունից՝ դիմում ենք ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին ու վարչապետ Հովիկ Աբրահամյանին՝ տեղյա՞կ եք, թե ինչով է զբաղված Կապանի խոշորագույն ձեռնարկության վարիչն այս կողմերում:

Ձեռնարկության սեփականատերը, ըստ էության, չի գիտակցում, որ Կապանի կոմբինատն առանցքային նշանակություն ունի մարզկենտրոնի համար, որ ձեռնարկության վիճակը, նրա ղեկավարի վարքը բոլորին մտահոգող հարց է: Ահա ինչու էլ խնդրում ենք հայրենական իշխանությունների միջամտությունը՝ հիշեցնելով, որ Հրաչ Ջաբրայանի «ուտիլիզացիա» սյունիքյան օրակարգի առաջնահերթ հարցերից է:

Հոդվածը թերի կլիներ, եթե, գոնե համառոտ, չանդրադառնայինք կոմբինատի տնտեսական ցուցանիշներից մի քանիսին, որոնք, ի վերջո, այդ ձեռնարկությունում տիրող բարքերի գործնական արտահայտությունն են:

Իր իսկ խոստովանությամբ. **«Տարին փակել ենք արտադրության հսկայական նվազեցումներով: Արտադրել ենք մոտավորապես 403 հազար տոննա հանքաքար… պլանը 565 հազար էր: Պետք է արտադրեինք 31 հազար ունց ոսկի, արտադրել ենք մոտավորապես 21 հազար ունց: Այսինքն… երկու երրորդն ենք արտադրել: Եվ՝ բավականին մեծ բացթողումներ պղնձի ու ցինկի խտանյութերի արտադրության պահով»:**

Տնտեսական հետընթացի արդյունքում 2014 թվականին, 2012-ի համեմատությամբ, մոտ 2 մլրդ դրամով պակաս գումար է վճարվել Հայաստանի Հանրապետությանը:

Ստեղծված իրավիճակի եւ պերմանենտ նահանջի համար, ինչպես նախորդ տարիներին, ինքը, իբրեւ պատճառներ, նշում է միջազգային շուկայի անբարենպաստ վիճակը, Հայաստանի համապատասխան գերատեսչությունների խանգարիչ դերը եւ բազմաթիվ այլ հանգամանքներ:

Միայն շրջանցում է ձախողումների գլխավոր պատճառը: Իսկ գլխավոր պատճառն ավելի քան ակնհայտ է. բազմաչարչար հանքագործների շալակը ելած Հրաչը շատ վաղուց ավելորդություն է ու բացառիկ խանգարիչ գործոն այդ ձեռնարկությունում…

Փետրվարի 9-ին հանրությանը ներկայացվեց Հրաչի աղանդավորական բարբաջանքը եւս. **«Սիրելի Ընկերներ, Փետրվար 14-ը լինելով սիրահարների օր, մենք բոլորս պատրաստվում ենք Սուրբ Վալանդինի տոնը անցկացնել մեր սիրելիների հետ: ….Այս առթիվ հայտարարում եմ անակնկալ Արցախ այցելել ցանկացողների համար»:**

Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում տեղեկացնել, որ Սուրբ Վալենտինի տոնը որեւէ աղերս չունի Հայ առաքելական եկեղեցու հետ:

Իսկ Սյունիքն այն երկրամասն է, որտեղ, ըստ Ստեփանոս պատմիչի, առաջինն են ընդունել Հիսուս Քրիստոսի ուսմունքը հայոց մեջ: Եվ դարեր ի վեր սյունեցի պատանին ու աղջիկը հավատարիմ են մնացել այդ ուսմունքին ու մերժել կասկածելի վարքով Վալենտին կոչվածին: Այնպես որ որեւէ առաքինի պատանի ու աղջիկ՝ հատկապես Սյունիքից, իրեն թույլ չի տա հետեւել Հրաչի կոչին եւ մասնակցել Վալենտինի տոնին:

Հայ քրիստոնյաներիս համար դրա նախորդ օրը՝ փետրվարի 13-ին, ունենք Տեառնընդառաջ, որ նվիրված է քառասնօրյա Հիսուսին տաճար բերելուն:

Օգտվելով առիթից՝ կոչ ենք անում Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին՝ թույլ չտալ, որ ինչ-որ պատահական գոյություն մուռտառի քրիստոնեական Արցախը:

Մենք էլ փետրվարի 13-ին կելնենք Տիրոջն ընդառաջ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
10 փետրվարի 2015թ.

Կապան-Սումգայիթ առեղծվածը

Նորագույն պատմություն

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 5

տառությամբ նամակի հեղինակ Ռոզա Մամեդովան: Իրոք՝ այդ օրերին տարածված սուտը ոչ ոք չհաստատեց, որը փոթորիկի պես ավերում էր:

Հետագայում այդ մասին գրել են Բագրատ Ուլուբաբյանը /«Արցախյան պայքարի տարեգրություն, Երեւան, 1997, էջ 35»/, Վլադիմիր Գրիգորյանը /«Армения-1988-1989» Ереван 1990, с.86/, Սմբաթ Հովսեփյանը /ՀՀՇ եւ հայ ժողովրդի մեծ ողբերգությունը, Երեւան, 2002, էջ 32/ եւ ուրիշներ:

Այնուամենայնիվ՝ 1987-ի վերջին եւ 1988-ի սկզբին ի՞նչ է տեղի ունեցել Կապանում եւ դա որեւէ կապ ունեցե՞լ է Սումգայիթի ցեղասպանության հետ: Այն ժամանակ Կապանի շրջկոմի առաջին քարտուղար, վերոհիշյալ Ռ.Ղոնյանը 1990թ. հունվարի սկզբին պատասխանելով «Коммунист» թերթի այն հարցին, թե 1987թ. վերջին եւ 1988-ի սկզբին ի՞նչ է տեղի ունեցել Կապանում, այսպես է բացատրել. *այդ ժամանակ Կապանից սկսել են հեռանալ որոշ ադրբեջանցիներ, որի հիմնական պատճառը հետեւյալն էր. 1987թ. դեկտեմբերին Ադրբեջանի ղեկավարության մի մասի մոտ հասունացել էր Ապշերոնի շրջանի չօգտագործված հողատարածությունները, որոնք ընկած են Բաքվի եւ Սումգայիթի միջեւ, բաժանել եւ դրանք օգտագործել արդյունաբերական ձեռնարկություններ եւ բանջարաբուծական ընկերություններ հիմնելու համար: Այդ հարցը քննարկվել է հանրապետության կուստնտեսավարների ակտիվում եւ չնայած այդ մասին վեջնական որոշում չէր ընդունվել. սակայն Ապշերոնի շրջկոմի առաջին քարտուղար Զ.Մամեդովը որոշեց գործել եւ շրջանը փրկել լուծարումից: Հրաման է արձակվում չօգտագործված այդ հողերի վրա ստեղծել պետտնտեսություններ: Այդ մասին 1988թ. հունվարին թերթում հայտարարություն է հրապարակվել , որտեղ նշված է, որ այդ հողերի վրա բնակվողները կստանան արտոնություններ եւ անհատական բնակարան կառուցելու համար մինչեւ 40 հազար ռուբլի վարկ: Այդ լուրը հասել է նաեւ Հայաստանում ապրող ադրբեջանցիներին: Այդ մասին նույնիսկ հաղորդվել է Հայաստանի «Լրաբերով»: Դրանից հետո Հայաստանից շատ ադրբեջանցիներ ցանկություն են հայտնել մեկնել Ադրբեջան, այնտեղ հողատարածություն ստանալ եւ բնակարան կառուցել: Հենց այդ նպատակով էլ 1988թ. հունվարի 12-ից մինչեւ 15-ը միայն Կապանի շրջանից մեկնել է 100 հոգի: Մինչեւ փետրվարի վերջը գնացողների թիվը հասել էր 500-ի: Այդ ժամանակ տեղի ունեցող միտինգներում հորինվում էին ինչ-որ ցանկանաս: Մեր շրջանում ոչ մի վիճաբանություն, ոչ մի բռնաճնշում չի եղել: Սակայն թե այդ սուտն ու կեղծիքը ովքեր էին հորինում, այդպես էլ մնաց չբացահայտված: Փետրվարի 27-ին գնացքով գնացել է 200 մարդ: Իմիշլիում կանգնեցվել է գնացքը: Գնացքը կանգնեցրել էին իմիշլիցիները, որովհետեւ, ըստ նրանց բացատրության, գնացող այդ «փախստականները» կարող էին Բաքվում անկարգություններ սարքել: Հեռացող ադրբեջանցիները տեղի եւ Կապանից գնացած ղեկավարին ասել են, որ իրենք հայերի նկատմամբ ոչ մի դժգոհություն չունեն, եւ որ իրենք Բաքու են գնում իրենց հարազատների կանչով: Չգիտեմ. հնարավո՞ր է, որ նրանք գիտեին նախապատրաստվող հետագա անախորժությունների մասին: Վերադարձի ժամանակ իմիշլիցիները շրջկոմի քարտուղարի մեքենայի վրա քարեր են նետել /«Коммунист», 05.01.1990/:* Հենց այդ օրերին շրջկոմի բյուրոն քննարկելով «ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի 1988թ. փետրվարի 28-ի որոշման կատարման միջոցառումների մասին» որոշումը, շեշտում է, որ շրջանից ադրբեջանցիների հեռանալու համար հիմքեր չկային եւ չի արձանագրվել առանձին մարդկանց ահաբեկելու, կարգուկանոնի խախտման, խուլիգանական որեւէ արարք, դրանք հիմնականում կապված են եղել Ղարաբաղի հարցի կապակցությամբ տեղի ունեցած միտինգի հետ, որը ճիշտ չեն հասկացել ադրբեջանցիները /ՀԱԱ, ֆ.16, ց.38, .21, թ. 68-69/:

Այսպիսով, ըստ էության, Կապանի շրջանից հեռացած ադրբեջանցիները ոչ մի կապ չեն ունեցել Սումգայիթի իրադարձությունների հետ: Դա նույնիսկ վկայել է ԽՍՀՄ Գերագույն դատախազի տեղակալ Ալեքսանդր Կատուսեւը «Բակինսկի բաբոչի» թերթին 1988թ. մարտի 12-ին եւ օգոստոսի 19-ին տված հարցազրույցներում:

Շարադրվածից հետեւում է.

1. Մինչեւ 1988թ. փետրվարի վերջը Հայաստանի Կապանի շրջանից հեռացած ադրբեջանցիների մասին ազերի եւ օտարազգի հեղինակների գրածները լիովին կեղծիք են, հորինված եւ հայ ժողովրդին վարկաբեկելու միջոց: Հեռացած ադրբեջանցիների նկատմամբ հայերի կողմից ոչ մի ուժ եւ բռնություն չի գործադրվել, նրանք հեռացել են կամավոր, իրենց ցանկությամբ:

2. Կապանի շրջանից հեռացած ադրբեջանցիները ոչ մի կապ չեն ունեցել Սումգայիթում իրագործված ցեղասպանության հետ: Սումգայիթի հրապարակում ելույթ ունեցողներից ոմանք հորինել են ցնցող պատմություններ, իրենց ներկայացրել իբրեւ կապանցի «փախստականներ»: Նրանք եղել են նախօրոք նախապատրաստված հանցագործներ:

3. Միության ղեկավարության անտարբեր եւ հանցագործ քաղաքականության հետեւանքով մինչեւ հիմա չի բացահայտվել ամբողջ ճշմարտությունը եւ դաժանորեն ցեղասպանություն իրագործած շատ մասնակիցներ մնացել են անպատիժ:

■

Դպրոցը՝ բանակի կողքին

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 2

անվան ռազմարվեստի պատմության կաբինետը», – զեկուցում է դասակի հրամանատար-աշակերտ Հովակիմյանը: Աշակերտները գիտեն՝ Սիսիանի շրջանի Վաղատնի գյուղում ծնված զինվորականը մեծ ավանդ է ներդրել ինչպես հայ, այնպես էլ Խորհրդային Միության հետախուզության պատմության մեջ: 1970-ական թթ.-ից աշխատել է Խորհրդային Միության հետախուզության համակարգի կենտրոնական ապարատում: Իրանի Իսլամական Հանրապետությունում եղել է Խորհրդային Միության դեսպանության կցորդ, այնուհետեւ՝ Աֆղանստանում Խորհրդային Միության փոխհյուպատոս: 1992թ. ՀՀ ԱԱԾ հետախուզության գլխավոր վարչության ղեկավարն էր, 1995-ից՝ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետը:

Հաջորդիվ բացվեց Սիսական գնդի հիմնադիր-հրամանատար, գնդապետ Հովիկ Ազոյանի անվան հուշատախտակը: Հենց այդ դասարանում այսուհետ ավագ դպրոցի աշակերտները կրակային պատրաստություն կանցնեն, կծանոթանան զենքի տեսակներին, դրանց կառուցվածքին, խնամքի, պահպանության եւ օգտագործման կանոններին:

«Ես ուրախ եմ, որ էսպիսի բանակ ունենք: Ազոյանի երազած բանակն է: Տխուր եմ, որ նրանք մեզ հետ չեն, բայց եւ հպարտ, որ իրենց թողած հետքը կա, – ասում է Հովիկ Ազոյանի այրին՝ Նաթելա Ազոյանը: – **Խոնարհվում եմ ոսկեբազուկ զինվորների առաջ: Սիսիանցին միշտ հաղթել է ու կհաղթի: Գլուխը միշտ բարձր հաղթանակել է նաեւ մեր ժողովուրդը: Այս ամենը հենց դպրոցից է սկսվում»:**

Ավագ դպրոցի մարտարվեստի դասասենյակը կկրի աֆղանական հատուկ դեսանտային զորամասում ծառայած, Արցախյան ազատամարտին իր կյանքը նվիրաբերած Գրիգոր Գրիգորյանի անունը: Մարտարվեստի գաղտնիքները յուրացնելուն կօգնեն համապատասխան ուսուցողական պաստառները:

Դպրոցի դահլիճում ներկաներին հրամցված միջոցառումը՝ ուղեկցված երգով, պարով ու ասմունքով, օրվա չորս հերոսին ու հայոց բանակի կազմավորման 23-րդ տարեդարձին էր նվիրված:

Վերջում բեմը ցուցադրական մարտադաշտի վերածեց Սիսիանի զորամասի հետախուզական վաշտը:

Կազմակերպված միջոցառման ու ռազմահայրենասիրական դաստիարակության համար նախատեսված դասարանների ձեւավորման եւ ընդհանրապես դպրոց-բանակ կապն ամրապնդելու համար կրթօջախի տնօրենությանը շնորհակալություն հայտնեց պաշտպանության նախարարի խորհրդական, գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը:

«Մենք մեր պարտքն ենք կատարում: Դպրոցը միշտ զինվորի կողքին է: Մենք ուղղակի պարտավոր ենք անել ամեն ինչ, որ ցանկացած աշակերտ լինի հայրենասեր, օրինապահ: Ես վստահ եմ՝ մեր դպրոցի շրջանավարտներն ազգի արժանի զինվոր կդառնան», – ասում է ավագ դպրոցի տնօրեն Նաիրա Ներսիսյանը, ով պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով պարգեւատրվեց «Վազգեն Սարգսյան» մեդալով:

Մի շարք աշխատակիցներ ու աշակերտներ պատվոգրեր ու շնորհակալագրեր ստացան: Զինղեկ Հրայր Գրիգորյանին ավագ լեյտենանտի կոչում շնորհվեց: Արցախյան ազատամարտի հրամանատար Աշոտ Մինասյանն արժանացավ «Հունան Ավետիսյան» մեդալի:

Այսօրվա աշակերտը վաղվա զինվորն է, ու որքան բարձր մակարդակով իրականացվի ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում, այնքան մարտունակ ու անխոցելի կլինի հայկական բանակը՝ համոզված է գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանը: **«Մենք ազգովի պիտի պատրաստ լինենք թշնամու յուրաքանչյուր ոտնձգության,** – նշում է նա: – **Մենք իսկապես ունենք հզոր բանակ, ու բոլորս պետք է կանգնած լինենք բանակի ու հայ զինվորի կողքին»:**

ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ամփոփվեցին «Ռուսական արջուկ» եւ «Մեղու» մրցույթների արդյունքները

Հանրակրթություն

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 2

նադրամը երբեւիցե նպատակ չի ունեցել ցույց տալու մարզի, դպրոցի կամ էլ աշակերտի առավելությունը. չափանիշը նույնն է բոլորի համար: Արդյունքներն ամփոփվում են ըստ միավորների՝ համեմատության կարգով: **«Լավագույն արդյունքը բոլորի համար է: Լավ կամ վատ որակը որոշում ենք տոկոսային հարաբերությամբ՝ կախված տվյալ տարվա արդյունքների ընդհանուր պատկերից: Քանի որ «Մեղու» մրցույթն առաջին անգամ էր կազմակերպվում, եւ մենք պետք է ընդհանուր վերլուծություն անեինք, ուստի որոշվեց 3-4-րդ դասարանցիների համար, ովքեր հավաքել են 92-109 միավոր՝ առավելագույնը 110 միավորից, համարել լավագույն արդյունք, իսկ 4-12-րդ դասարանցիների համար՝ 100-119՝ առավելագույնը 120 միավորից: Դասարանների միավորների տարբերությունը պայմանավորված է առաջադրանքների քանակով»,** - նշեց Շ.Կարապետյանը:

Ծրագրի ղեկավարը հավելեց, որ առաջադրանքներն այնպես են կազմում, որ մասնակից աշակերտները գոնե որոշակի միավոր հավաքեն: Նա հորդորեց ուսուցիչներին թույլ չտալ արտագրություններ, առավել եւս չօգնել աշակերտներին, քանի որ ստուգման մեխանիզմն այնպես է մշակված, որ նման արատավոր երեւույթներն իսկույն ակնհայտ են դառնում: Աշակերտը մրցում է ինքն իր հետ՝ տարեցտարի զարգացնելով իր հմտությունները:

«Մեղու» մրցույթի համար հատուկ աշխատանքային խումբ է ստեղծվել եւ «Ռուսական արջուկ», «Կենգուրու» միջազգային մրցույթների տեխնոլոգիաները, մեխանիզմներն ու առանձնահատկությունները հաշվի առնելով՝ առաջադրանքը կազմվել: Կապանի N 2 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Թինա Գրիգորյանը, ով մարզում հավաքել էր ամենաշատ միավորը, նշեց. **«Առաջադրանքները բավականին հետաքրքիր ու տրամաբանական էին եւ պահանջում էին առավելագույն ուշադրություն: Նեռաբված տարբեր բառային աշխատանքները եւս մեկ անգամ հնարավորություն տվեցին զարգացնելու մեր լեզվամտածողությունը»:**

Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը, շնորհակալություն հայտնելով մանկավարժներին եւ աշակերտներին, ցանկություն հայտնեց, որ այդ մրցույթները կազմակերպվեն անվճար հիմունքներով: Նա նշեց, որ ավելի նպատակահարմար կլինի, որ այդ մրցույթները եւ մրցանակաբաշությունն անցկացվեն շաբաթ եւ կիրակի օրերին, որպեսզի դասապրոցեսի բնականոն ընթացքը չխախտվի:

Վարչության պետի մտահոգություններին ծրագրի ղեկավարը պատասխանեց, որ մրցույթները վճարովի են կազմակերպվում (յուրաքանչյուր մրցույթին մասնակցելու համար աշակերտը վճարում է 970 դրամ)՝ պայմանավորված այն հսկայական ծախսերով, որ պահանջվում է մրցույթը կազմակերպելու համար: Ինչպես նաեւ նշեց, որ մեր երկրի տնտեսության մեջ ինչքան էլ վայրիվերումներ գրանցվեն, միեւնույն է, վճարման չափը նույնն է մնալու: Բացի դրանից՝ նրանք հաշվի են առնում ծնողների սոցիալական վիճակը եւ տարբեր ժամանակահատվածում են կազմակերպում մրցույթները. այն բոլոր պետություններում, որտեղ անց են կացվում այս մրցույթները, կազմակերպվում են վճարովի հիմունքներով, բացի Ղազախստանից, որտեղ պետությունն է հոգում այդ ծախսերը: Ինչ վերաբերում է շաբաթ եւ կիրակի օրերին մրցույթը կամ էլ մրցանակաբաշխությունը կազմակերպելուն, ապա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ օրերին կազմակերպված նմանատիպ միջոցառումները ծախողվում են՝ մասնակիցների սակավության պատճառով: Մյուս կողմից էլ՝ չէ՞ որ սա էլ գիտելիքի յուրահատուկ ստուգման դաս է:

Հիմնականում բողոքում են «Ռուսական արջուկ» մրցույթի առաջադրանքներից, քանի որ դրանք չեն համապատասխանեցվում տեղական ծրագրերին: Իսկ ընդհանուր առմամբ առաջադրանքները պարզից դեպի բարդ սկզբունքով են կազմվում, որպեսզի յուրաքանչյուր մասնակից անպայման որոշակի միավոր վաստակի: Արդյունքում բոլոր մասնակիցները ստանում են հավաստագրեր, բարձր միավոր ստացողները՝ նվերներ, իսկ լավագույն արդյունք գրանցողները՝ պատվոգրեր ու նվերներ: Հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Սուսաննա Օհանջանյանը, բարձր գնահատելով մրցույթի արդյունավետությունը, նշեց, որ ցանկալի կլիներ ըստ մարզերի ու դպրոցների առանձնացնել հաղթողներին: Նրա կարծիքով՝ սա ավելի ոգեւորիչ կդարձներ մրցույթները:

«Մեղու» մրցույթից այս տարի կա երեք հաղթող: Նրանք հավաքել են առավելագույն միավոր: Կարգի համաձայն՝ հանձնաժողովը հանդիպել է մրցույթի հաղթողներին, լրացուցիչ առաջադրանքների միջոցով ստուգել նրանց գիտելիքները՝ կեղծիքից խուսափելու համար, հետո միայն նրանց հաղթող հայտարարել:

Այս տարի «Կենգուրու. մաթեմատիկա բոլորի համար» մրցույթն անց է կացվելու մարտի 26-ին, իսկ վճարման վերջնաժամկետը փետրվարի 26-ն է: **«Մենք ուրախ ենք, որ «Մեղու»-ն մեծ ոգեւորությամբ ընդունվեց: Այս վեց տարվա ընթացքում «Այբ» հիմնադրամի նախաձեռնած մրցույթների մասնակիցների թիվն ավելացել է, որ, նախեւառաջ, պարտավորեցնող է ու ոգեւորիչ: Խնդրանքս այն է, որ մրցույթի անցկացման կարգին հատկապես ցածր դասարանի աշակերտների ծնողները ծանոթանան եւ բացատրեն երեխաներին լրացման կարգը՝ սխալներից խուսափելու համար, ինչպես նաեւ ժամանակին կատարեն սահմանված վճարումը»,** - խոսքը եզրափակեց Շուշան Կարապետյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հիշողություն

Ընկեր Նորան

Կար ժամանակ, որ Երեւան-Ստեփանակերտ մայրուղին Գորիսով անցնում էր այսպես կոչված «Ցեմենտի կամրջով»: Այդ ճանապարհից հյուսիս ոչ մի շենք, շինություն չկար: Առաջին շենքը, որի հիմքը դրվեց եւ արագորեն բարձրացավ, պիոներ-պալատի շենքն էր: «Ցեմենտի կամուրջ», առավել եւս «պիոներ պալատ» ընկալումը հիմա էլ կա, թեեւ ոչ նախկին նշանակությամբ:

Այսօր ցանկանում եմ պատմել մի մարդու մասին, ում նվիրումի, հետեւողականության շնորհիվ պիոներ-պալատն իրոք պալատ դարձավ այս բառի դասական իմաստով: Շատերն արդեն հասկացան, որ խոսքս ընկեր Նորա Հայրապետյանի, ընկեր Նորայի, պիոներ-պալատի Նորայի մասին է:

Մեզանից շատերը, այդ թվում տողերիս հեղինակը, ի պաշտոնե եղել են ընկ. Նորայի ղեկավարը, վերադասը, մեր «վերադասության», ղեկավարության հետ ստացել նաեւ նրա դաստիարակությունը, ինչու չէ, նաեւ հոգատարությունը որպես երկրորդ մայր: Խնդրում եմ չմտածել, թե ասածս լրագրողական հնարք է: Ուղղակի ընդունեք որպես մի քիչ ուշացած խոստովանություն:

Հիշում եմ, ավարտվել էին պիոներ պալատի շինարարական աշխատանքները: Շահագործվում էր հսկայական մակերեսով շենքը՝ դրա պահպանման, կահավորման համար չնչին բյուջեով, հաստիքների ոչ թե քչությամբ, այլ՝ կարելի է ասել, բացակայությամբ: Շահագործվում էր պիոներ պալատը, որը պետք է աշխատեր պիոներ տան հաստիքներով: Մինչ այդ աճող սերնդի դաստիարակության այդ կարեւոր գործը ղեկավարվում էր Գորիսի Վարդան Մամիկոնյան եւ Կոմիտասի փողոցների խաչմերուկի՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կառլեն Բագրատի Աքունցի ընտանիքի սեփական տան երկու սենյակից:

Ահա այստեղ էր, որ բացահայտվեցին այդ փխրուն կնոջ կազմակերպչական, մարդկանց հետ աշխատանք կատարելու, ընդհանուր գաղափարի շուրջ նրանց համախմբելու ու համոզելու մեծ ունակությունները: Նման դեպքերում ընդունված է ասել, որ նա անհրաժեշտ տեղում հանդիպեց անհրաժեշտ մարդկանց: Հիշենք նրանցից երկուսին՝ երջանկահիշատակ Գերասիմ Ասատուրի Հարությունյանին, ով այն ժամանակ Գորիսի քաղսովետի գործկոմի նախագահն էր, եւ Երվանդ Սահակի Հովհաննիսյանին, ով ղեկավարում էր քաղաքի կոմունալ տնտեսությունը: Հայրենի քաղաքը, այդ քաղաքի ամենափոքրերին սիրող այս երկու այրն օգտագործելով իրենց պաշտոնեական դիրքը, նաեւ անձնական հմայքը, կապերը, թեւ ու թիկունք եղան ընկ. Նորային, օգնեցին կահավորել, իսկական պալատի տեսք տալ շենքին:

Բառացիորեն երկու տարի անց մեր պալատը թե իր տեսքով, թե աշխատանքների բազմազանությամբ, ծավալներով եւ մակարդակով հանրապետությունում լավագույններից էր: Այն թերեւս զիջում էր միայն Երեւանի Ղուկաս Ղուկասյանի անվան պիոներ-դպրոցականների քաղաքային պալատին: Եվ դա՝ Նորա Հայրապետյանի նվիրումի շնորհիվ: Հիմա հեշտ է անցածգնացած այն օրերի մասին գրելը, խոսելը, մանավանդ որ ընդդիմախոս էլ չունես, բայց անկեղծությունը ստիպում է գիտակցել, որ շատ բան է փոխվել, եւ առաջին հերթին փոխվել են մարդկային հարաբերությունները: Մեր խոսակցական լեզվի մեջ ամուր նստել է «դա իմ պրոբլեմը չէ» արտահայտությունը, որը ժողովրդական լեզվով թարգմանած նշանակում է, թե՝ եղունգ ունես՝ գլուխդ քորի: Եթե ընկ. Նորան այսպես մտածեր, եթե բոլոր նրանք, ում դիմում էր մեր ակնարկի հերոսը, այսպես մտածեին, ապա շատ ծրագրեր կմնային անկատար: Պիոներ ասելով շատերը հասկանում են ցածր դասարանցի երեխաներ, ովքեր կարմիր վզկապ էին կրում: Բայց ոչ, հազար անգամ ոչ, այդպես չէր: Դա մանկական կազմակերպություն էր, որ զբաղվում էր երեխաների կազմակերպչական ունակությունների զարգացման, դաստիարակության հարցերով: Այնքան վճռորոշ էր լինում կազմակերպության ազդեցությունը երեխայի վրա, որ, օրինակ, արդեն 6-րդ, 7-րդ դասարանում մասնագիտական կողմնորոշման մանկական որոշումը հաճախ այլեւս չէր փոխվում:

Ընկ. Նորան գործի է անցնում: Մեզ մոտ են հրավիրվում բարձր որակավորում ունեցող բազմաթիվ, ինչպես հիմա է ընդունված ասել, արհեստավարժ պարուսույցներ, գեղանկարչության, ժողովրդական արհեստների վարպետներ: Հեշտ է ասել՝ հրավիրվում են… Ընկ. Նորան, ինչպես ժողովուրդն էր ասում, կին հալով, գնում, խնդրում էր նրանց, բերում եւ տիրություն անում: Այո, տիրություն անում…

Գորիսում շատերն են հիշում պարուսույց Օսիկ Շամամյանին, Ղուկասին, Օնիկին: Նրանք իրենց մասնագիտության մեջ եզակի էին նաեւ հանրապետությունում: Այդ ընկ. Նորա մանկավարժին բնորոշ մոտեցման, մայրական հոգատարության շնորհիվ էր, որ հրավիրված երիտասարդ մասնագետները, տնից-տեղից կտրված, համբերությամբ ուսուցանում էին պարարվեստի նույնիսկ տառը չիմացող մեր երեխաներին: Ահա թե ինչու էին նրանք արժանանում մեր հերոսի առանձնակի ուշադրությանը: Վկա ենք այն բանի, որ ընկ. Նորան տանը ճաշ էր պատրաստում, ուղարկում Ղուկասի, Օնիկի՝ Գորիսում վարձակալած տները, որ վերջիններս մի քանի ժամ ավելի մնան Գորիսում, մի անգամ պակաս գնան Երեւան: Նրանք կապվեցին Գորիսին: Նրանց ճանաչում էին համարյա բոլոր գորիսեցիները: Նրանք սիրեցին Գորիսը, Գորիսն էլ՝ նրանց: Այդ սերն արդյունք տվեց. անվանի պարուսույցների սաներից շատերն ուսում ստացան մայրաքաղաքում եւ որպես պրոֆեսիոնալ պարուսույցներ՝ վերադարձան հայրենի Գորիս:

Ընկ. Նորայի մանկավարժական բազմաբեղուն գործունեության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում պիոներ-պալատի անվանակոչությունը ԽՍՀՄ պետական մրցանակի քառակի դափնեկիր, սոցիալիստական աշխատանքի հերոս, ռազմական արդյունաբերության անփոխարինելի կազմակերպիչ ու մասնագետ, գեներալ-մայոր, մեր հայրենակից Համո Յոլյանի անվամբ: Այս խիստ տարողունակ գործընթացի ամբողջ ծանրությունն սկզբից մինչեւ վերջ իր ուսերին տարավ ընկ. Հայրապետյանը:

Արտաքուստ թվում էր, թե որեւէ արտառոց, առավել եւս դժվար բան չկա: Կա ցանկություն, կա արժանի անհատ, ում անունով ցանկանում ենք անվանակոչել եւ վերջ, մնում է համապատասխան մարմնի որոշումը, ու պալատն անվանակոչված է: Տեսնո՞ւմ եք, թե ամեն ինչ ինչքան հեշտ ստացվեց: Փորձենք թվարկել ընկեր Նորայի կատարած քայլերն այդ ուղղությամբ: Մոսկվայաբնակ ազգականների միջոցով իմացավ հերոսի ոչ պակաս նշանավոր ազգական՝ ԽՍՀՄ հերոս, փորձարկող օդաչու Էդուարդ Յոլյանի հեռախոսահամարները: Մի քանի շաբաթվա ընթացքում բազմաթիվ անգամ փորձեց կապվել նրա հետ, բացատրել, բայց շոշափելի արդյունքի վերջը չէր երեւում: Հայտնի բան է, եթե ուզում ես որեւէ գործ փչացնել՝ զանգահարիր եւ այդ մասին պայմանավորվիր հեռախոսով: Մեր դեպքում հենց այդպես էլ կար: Ստիպված էր մեկնել Մոսկվա: Նորից օգնության ձեռք մեկնեցին ազգակից-բարեկամները, որոնց միջոցով էլ դեմ առ դեմ հանդիպեց հերոսին: Մեկ, մեկուկես ժամվա հանդիպման ընթացքում լուծվեցին հարցեր, որոնք չէին լուծվում շաբաթների ընթացքում: Պայմանավորվածություն ձեռք բերվեց Համո Յոլյանի նամակների, անձնական իրերի հանձնման, պահպանման կարգի մասին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց հիմնական միջոցառումների օրացույցի շուրջ: Ոգեւորությունը մեծ էր: Սկսվեցին կազմակերպական հագեցած աշխատանքները: Դա առիթ էր ի մի հավաքելու Յոլյանների տաղանդաշատ տոհմի զավակների անձնական իրերը, փաստաթղթերը, հիմք դնելու տոհմական թանգարանին: Չպետք է մոռանալ, որ փառապանծ Յոլյանների տոհմի մեծանուն անհատներից միայն Համո Յոլյանն է, ով իր աշխատանքային գործունեությունը սկսել է Գորիսում, իսկ հերոս, փորձարկող օդաչու Էդուարդ Յոլյանը պատմական հայրենիքում չէր եղել ընդհանրապես: Այդ իմաստով վերջինիս այցելությունը նախնիների երկիր նոր բովանդակություն էր ստանում, իսկ պալատի անվանակոչումն էլ դուրս էր գալիս սովորական դպրոցական միջոցառման շրջանակներից:

Պալատը կրելու էր մի մարդու անուն, ով լեգենդ էր կենդանության օրոք: Ժողովուրդը նրա անվան շուրջ հենց նման լեգենդներ էլ ստեղծել էր, որոնցից մեկը բուռն էր շրջանառվում: Պատմում էին, որ իբր խառը ժամանակներում Գորիսից Ստալինի հասցեով բազմաթիվ հեռագրեր էին թռչում՝ Համո Յոլյանին անվանազրկելու, նրան որպես հայրենիքի դավաճան ներկայացնելու համար: Ստալինին հայտնում էին, որ Համո Յոլյանն ի հավելումն բազմաթիվ մարդկային թերությունների, նաեւ դաշնակցական կուսակցության անդամ է: Եվ իբր Ստալինը պատասխանում է այդ բովանդակությամբ հեռագրին՝ եթե ձեզ մոտ նման դաշնակցականներ էլի կան, ապա ուղարկեք Մոսկվա, այստեղ դրանց կարիքը կա: Գեներալ-մայոր Համո Յոլյանը ղեկավարում էր թիվ 92 ռազմական գործարանը, որը պատերազմի տարիներին արտադրեց ավելի քան 100 հազար հակատանկային թնդանոթ: Դա ավելի էր, քան ֆաշիստական Գերմանիայի ամբողջ արտադրանքը պատերազմի տարիներին: Վերջին թնդանոթի մասերը Յոլյանի հարազատները նվիրեցին պալատին: Պալատին նվիրվեց նաեւ Էդուարդ Յոլյանի այն համազգեստը, որով վերջինս որպես օդանավի հրամանատար օդ էր բարձրացրել Ty-144 գերձայնային գեղեցկուհին: Նման ցուցանմուշներով կարող են հպարտանալ աշխարհի շատ թանգարաններ:

Փոքրիկ, շրջանային պիոներական միջոցառումը ծավալվեց, դարձավ համաժողովրդական: Ամբողջ քաղաքը դուրս էր եկել տեսնելու իր անվանի հայրենակցին, ով իր նախադեպը չունեցող հերոսությամբ ոչ միայն մեր քաղաքի, այլ նաեւ մեր ժողովրդի, երկրամասի անունն էր ներկայացրել աշխարհին: Միջոցառումը լուսաբանվեց հանրապետության բոլոր լրատվամիջոցներով, հերոսին ընդունեցին հանրապետության ղեկավարները: Սիրելի քաղաքիս, շրջանիս շուրջ ստեղծվեց համընդհանուր հարգանքի եւ ուշադրության մի նոր պսակ:

1986 թվականին Նորա Հայրապետյանն արժանանում է վաստակավոր ուսուցչի կոչման: Այն տարիներին դա աննախադեպ էր ոչ ակտիվ մանկավարժությամբ զբաղված անհատների համար:

Որդիները, թոռները պատրաստվում էին երկու տարի հետո հանդիսավորությամբ նշելու նրա ծննդյան 85-ամյակը: Ծնվել էր 1931-ին: Սակայն, ինչպես ասում են, մարդը որոշում է, իսկ Աստված՝ տնօրինում: Անհետք չէին մնացել որդու ողբերգական եւ ամուսնու անժամանակ մահերը: Առողջությունը ճաք էր տվել: 2014 թվականին դադարեց բաբախել նաեւ նրա սիրտը:

Վաղուց, շատ վաղուց պիոներ-պալատի շենքն այլ նպատակների է ծառայում, չգիտեմ նույնիսկ, թե ինչ վիճակում են թանգարանային բացառիկ ցուցանմուշները:

Իսկ ընկեր Նորան երբեմն զանգահարում էր, զրուցում, պատրաստակամություն հայտնում կազմակերպելու նախկին աշխատակիցների հանդիպում: Շատ հասկանալի ցանկություն էր. մեզ բոլորիս, իր սաներին ու ղեկավարներին «իրար գլխի» հավաքել, վերապրել անցածը: Խոստացանք, բայց չօգնեցինք նրան իրականացնել այդ խիստ մարդկային ցանկությունը՝ մտածելով, թե առայժմ ավելի կարեւոր գործեր կան: Ինչպես միշտ, այս անգամ էլ մենք սխալ էինք, իսկ ընկ. Նորան՝ ճիշտ: Այս անգամ էլ մենք մնացինք պարտք: Նա մեզ շատ է ներել, այս անգամ էլ կների, մենք էլ դրա փոխարեն հիշում եւ սիրում ենք նրան:

Վրացական մի հին ավանդազրույց կա: Ըստ այդ զրույցի՝ երկրային կյանքին հրաժեշտ տված յուրաքանչյուր հոգու հանդերձյալ աշխարհի առաջին խաչմերուկում ծերունազարդ մի մարդ է սպասում՝ ձեռքին գինու երկու թաս եւ այդ թասերից փոքր գինու կուլա: Նա այդ կուլայից գինի է լցնում գնացածի եւ իր համար: Եթե կուլայի գինին վերջանում է, ուրեմն այս աշխարհում արդեն մոռացել են հեռացածին, իսկ քանի դեռ հիշում են, այդ փոքրիկ կուլայի գինին քլթքլթալով լցվում է թասերի մեջ, չի վերջանում:

…Մենք հիշում ենք ընկ. Նորային, նշանակում է՝ նա ապրում է մեզ հետ, նշանակում է՝ կուլայի գինին դեռ չի վերջացել…

Եվ վերջում նորից մեր ավանդապաշտության մասին. քանի դեռ ժողովուրդն այդ շենքը կոչում է պիոներ-պալատ, ապա այդ վերջին բառակապակցությունը մեզ հիշեցնելու է ընկ. Նորայի մասին, թույլ չի տալու մոռանալ նրան:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հանկարծամահ է եղել Կարեն Սահակյանը

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմն ափսոսանք է հայտնում Կարեն Գառնիկի Սահակյանի վաղաժամ մահվան կապակցությամբ եւ ցավակցում նրա հարազատներին ու մերձավորներին:

Կարեն Սահակյանը մահկանացուն կնքեց 2015թ. փետրվարի 10-ին՝ իր ծննդյան օրը:

Ծնվել է 1952 թվականին Գորիսի շրջանի Ակներ գյուղում: Ավարտել է Վերիշենի միջնակարգ դպրոցը ոսկե մեդալով եւ Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի Գորիսի մասնաճյուղի ֆիզիկայի ֆակուլտետը (1973): 1973-76թթ. աշխատել է Վերիշենի դպրոցում՝ ֆիզիկայի ուսուցիչ, 1976-77թթ.՝ Գորիսի ԼԿԵՄ շրջկոմում, 1978թ. ընտրվել է Գորիսի վերոհիշյալ մասնաճյուղի արհկոմի նախագահ, 1979թ.՝ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան: 1987թ. ավարտել է ասպիրանտուրան՝ թեկնածուական դիսերտացիա ներկայացնելով «Միջառարկայական կապերի իրականացումը որպես սովորողների գիտամատերիալիստական աշխարհայացքի ձեւավորման կարեւոր պայման» թեման (մանկավարժական գիտությունների թեկնածու էր 1991 թվականից, դոցենտ՝ 1994 թվականից): 1998-ից աշխատում էր ՀՊՃՀ Գորիսի կրթահամալիրի (2005-ի դեկտեմբերից՝ Գորիսի պետհամալսարան) մանկավարժության դեպարտամենտի վարիչ, ապա ԳՊՀ-ի մանկավարժական հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան: ՀՀ մանկավարժական ընկերության անդամ էր, բազմաթիվ գիտական հոդվածների եւ մենագրությունների հեղինակ:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

ԿՈՐԵԼ է Կապանի բժշկական ուսումնարանի 1997-98 ուստարվա շրջանավարտ Ագապի Շահնազարյանի K033779 դիպլոմը: Համարել անվավեր:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել Իրինա Նիկոլաեւնա Կոմովայի կողմից Վագիֆ Վոլոդյայի Միրզոյանին մահացած ճանաչելու պահանջի մասին:

Բոլոր այն անձանց եւ կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Վագիֆ Վոլոդյայի Միրզոյանի (ծնված 01.02.1960թ., հաշվառված ք.Կապան, Սպանդարյան 4-րդ նրբ., տուն 32 հասցեում) գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք. Կապան, Ս. Մելիք-Ստեփանյան 3/2, հեռախոս (0285) 5 29 59:

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ի գիտություն բաժանորդների

Ընթանում է «Սյունյաց երկիր» թերթի 2015թ. բաժանորդագրությունը: Հայտնում ենք, որ թերթի տարեկան բաժնեգինը ***10,000*** դրամ է:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ մրցութային կարգով աշխատանքի է հրավիրում հերթապահ բուժքրոջ: Մրցույթի անցկացման համար դիմումներն ընդունվում են աշխատանքային օրերին ժամը 9:00-ից մինչեւ 17:30-ը: Մրցույթը կանցկացվի ս.թ. մարտի 23-ին ժամը 10:00-ին ք. Կապան, Բաղաբերդ 48 հասցեում: Անհրաժեշտ փաստաթղթերի եւ մանրամասն տեղեկությունների համար դիմել տնօրենությանը՝ հեռախոսներ 5-37-12, 5-44-45, 091-20-83-25:

ՍՍՆՀԴ ՓԲԸ տնօրեն Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

AMERIABANK

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն «Կապան» մասնաճյուղում հայտարարում է մրցույթ հետևյալ հաստիքի համար

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ

Պաշտոնին ներկայացվող պահանջներին և դիմելու ընթացակարգին կարող եք ծանոթանալ «Ամերիաբանկ» ՓԲԸ պաշտոնական կայքից

www.ameriabank.am

ՀԱՐՑԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ, ԿԱՐՈՂ ԵՔ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ

(010) 56 11 11

Գյուղնախարարը՝ Սյունիքի մարզում

Պաշտոնական

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 1

կան ռեսուրսների կառավարման եւ մրցունակության» ծրագրի (CARMAC 1) դրական արդյունքները: Նախարարի խոսքով՝ ծրագրի շրջանակում մարզում հիմնվել են թվով 17 գյուղացիական կոոպերատիվներ, տրամադրվել 24 անվավոր տրակտոր եւ 100 այլ սարքավորումներ: Նշենք, որ ծրագիրը ֆինանսավորում է ձեռքբերվող գյուղտեխնիկայի արժեքի 80%-ը, իսկ 20% տրամադրում է կոոպերատիվը, պայմանով, որ գյուղտեխնիկան ստանալուց հետո 4 տարվա ընթացքում կոոպերատիվն իր հաշվին կուտակում է գյուղտեխնիկայի արժեքի 30% չափով գումար, որը կարող է օգտագործվել նոր գյուղտեխնիկա գնելու համար: Նախարար Սերգո Կարապետյանի դիտարկմամբ մարզում դեռեւս բարձր է գյուղտեխնիկայի մաշվածության աստիճանը: Այս խնդրի լուծման նպատակով պետությունը տնտեսվարող սուբյեկտներին տրամադրում է տեխնիկա ուղղակի վաճառքի, ինչպես նաեւ լիզինգի միջոցով՝ տարեկան 9 տոկոս տոկոսադրույքով, 20 տոկոս կանխավճարով, 6 տարի մարման ժամկետով:

Նախարար Սերգո Կարապետյանն ընդգծել է, որ պետությունը գյուղացիական տնտեսություններին օժանդակություն ցուցաբերելու նպատակով այս տարի եւս հետեւողականորեն շարունակում է սերմացուների, դիզելային վառելիքի եւ պարարտանյութերի տրամադրման ծրագրերը, ընդ որում դրանք կտրամադրվեն նախորդ տարվա գներով:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել է նաեւ ոռոգման աշխատանքների պատշաճ կազմակերպման հարցը: Ոլորտի պատասխանատուների հավաստմամբ՝ այս պահին վերջին աշխատանքներ են տարվում համակարգը նախապատրաստելու ուղղությամբ՝ մարտից 1-ից գյուղացիական տնտեսություններին կայուն ջրամատակարարում ապահովելու նպատակով: Այս համատեքստում նախարարը հատկապես կարեւորել է հանրապետությունում կաթիլային ոռոգման համակարգի ներդրմանն ուղղված քայլերը եւ փոքր ջրամբարների շինարարությունը:

Նախարարն անդրադարձել է նաեւ Սյունիքի մարզում անտառկառավարման ոլորտում առկա հիմնախնդիրներին՝ կարեւորելով ապօրինի անտառահատումների դեմ տարվող պայքարի ու այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումների նկատմամբ առավել հետեւողական մոտեցում որդեգրելու անհրաժեշտությունը:

Խորհրդակցության ավարտին գյուղատնտեսության զարգացման գործում ունեցած նշանակալի ավանդի եւ բեղմնավոր աշխատանքի համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով պարգեւատրվեց Սյունիքի մարզի ֆերմեր Գառնիկ Շալունցը, իսկ ոլորտի մի խումբ այլ ներկայացուցիչների հանձնվեցին շնորհակալագրեր:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Սյունիքի մարզի «Ալվանքի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնը զբաղեցնելու համար: Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. *ՀՀ քաղաքացիությունը,*
2. *Բարձրագույն կրթությունը,*
3. *Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):*

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. *Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,*
2. *ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,*
3. *Հաստատության ղեկավարման իրավունքի (հավաստագրի) պատճենը,*
4. *Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը (ներկայացնել մրցույթից առնվազն 3 օր առաջ),*
5. *Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),*
6. *Աշխատանքային գրքույկի պատճենը: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:*

Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 24-ից մինչեւ մարտի 25-ը՝ ժամը 15:00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2015թ. ապրիլի 3-ին՝ ժամը 12-ին, Սյունիքի մարզի «Ալվանքի միջն. դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 87 29 05 հեռախոսահամարով:

Սյունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում:

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 18.02.2015թ.: